

զատ, ստեղծագործել է Հայերէն եւ վրացերէն: Նրանից պահպանուել են սիրերգեր, պարսաւական-երգիծական եւ ներբողական խաղեր: Նշանաւոր է նրա այն դաստանը, որտեղ նկարագրուում է 1795 թ. Աղա-Մահմադի արշաւանքի ժամանակ Թիֆլիսի աւերումը:

Մի շարք աշուղական դպրոցներ եւ շնորհալի անհատ աշուղներ են գործել նաեւ ԺԹ. դարում՝ մինչեւ յաջորդ դարի առաջին տասնամեակները: Նրանցից յիշատակելի են Ծիրինը, Սէլադը, Գիրջի-Նաւէն, Նիրամին, Սազային, Ջամալին եւ շատ ու շատ ուրիշներ:

Ամենից աւելի բեղմնաւոր ու համբաւաւոր է եղել Ջիւանին (Սերոբ Լեւոնեան): Նա վերջին նշանաւոր հայ աշուղն է, որի ստեղծագործութեամբ աւարտուում է ուշ միջնադարից սկիզբ առած Հայ աշուղութիւնը, որը, որքան էլ Հայացուած, բայց պատկանում էր համարեւելեան երգարուեստին: Ջիւանին, լինելով վերջին խոշոր Հայ աշուղը, իր մեծ տաղանդի ուժով դնում է նաեւ նորի հիմքերը՝ լիովին ազգայնացնելով աշուղութիւնը: Նա, ինչպէս գրում է Գ. Լեւոնեանը, «շատ շուտով ոչ

միայն թողնում է թուրքերէնը, այլեւ Հայերէնի է վերածում հասարակութեան կողմից սիրուած թուրքերէն շատ աշուղական երգեր ու երգախառն հեքիաթներ, հանդիսանալով հիմնադիրը աշուղական հայկական դպրոցի»⁴⁷:

Ջիւանու եւ նրա հիմնած հայկական-ազգային աշուղական դպրոցի ներկայացուցիչների ստեղծագործութեան մէջ արդէն գերակշռում, ապա բացառապէս իշխում է Հայերէն երգը՝ թէ՛ բանաստեղծական, թէ՛ երաժշտական առումով: Նշուած դպրոցը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ վերադարձ դէպի ազգային-ժողովրդական, այն է՝ գուսանական երգը: Այդ դպրոցի աւանդութիւնների լաւագոյն կրողներն ու զարգացնողներն էին նոր շրջանի ժողովրդական երգիչներ Շերամը, Հաւասին, Աշոտը, Շահենը եւ ուրիշներ, որոնք գիտակցաբար, թէ ինքնաբուխ ներկայացան հանրութեանն իբրեւ գուսաններ: Այդ, ինչպէս նաեւ արդի մեր ժողովրդական երգիչների ստեղծագործութիւններն, ըստ էութեան, վերաբերում են Հայ գուսանութեան նոր եւ նորագոյն շրջանին:

47 Գ. Լեւոնեան, Երկեր, էջ 233:

ՅՈՎՀԱՆ ՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սուսանա Յովհաննիսեան

Նստիւմ է Յովհաննէս Գոմսեանի ծննդեան 150-ամեակին

Մինչեւ Առաջին աշխարհամարտի սկիզբը Թումանեանը չէր եղել Արեւմտեան Հայաստանում: Իսկ երբ պատերազմը վտանգեց Հայ ժողովրդի կեանքը, եւ Արեւմտեան Հայաստանը դարձաւ ռազմական գործողութիւնների թատերաբեմ, երբ արդէն տարիներ առաջ սկսուած ցեղասպանութիւնը լայն թափ ստացաւ, բանաստեղծը 7 ամսուայ ընթացքում՝ 1914 թ. նոյեմբերից 1915 թ. յունիս, երկու անգամ ուղեւորուեց Արեւմտեան Հայաստան՝ Ալաշկերտի, Բայազետի շրջան, Վասպուրական աշխարհ:

Գրողի առաջին ուղեւորութիւնը Արեւմտեան Հայաստան պայմանաւորուած էր Հայ կամաւորական ջոկատների գործունէութեամբ:

Պատերազմի սկզբում Կովկասում Ռուսաստանի վարած քաղաքականութիւնը երկդիմի էր: Հայ կամաւորական ջոկատները ձեւաւորուել էին փոխարքայ Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի եւ Հայոց ազգային բիւրոյի բանակցութիւնների արդիւնքում: Սակայն ռուսական իշխանութիւնները միաժամանակ սկսել էին խոչընդոտել կամաւորների գործունէութեանը՝ հնարաւորինս խանգարելով Հայերի համախմբմանը: Եթէ սկզբնական շրջանում Հայ կամաւորների սխրանքները գրուատանքի էին արժանանում, ապա շատ չանցած ցարական կառավարութիւնը սկսել էր անհանգստանալ, որ կամաւորների պայքարը կարող է ամբողջ Հայութեան մէջ առաջացնել անկախութեան ձգտում, ինքնավարութիւն ձեռք բերելու պահանջ: Ուստի

սկսել էին տարածել Հայ զինուորներին անուանարկող, շինծու, սադրիչ լուրեր, թէ իբր Հայ կամաւորները զբաղուած են թաւանով, վատ են վարուում թուրք եւ քուրդ խաղաղ բնակչութեան հետ, չեն ենթարկուում ռուսական հրամանատարութեանը եւ այլն: Ռուսներն ամէն կերպ աշխատում էին բաժանել կամաւորական խմբերը, որպէսզի միասնական հայկական զօրք ու բանակ չձեւաւորուէր: Այս ամէնը չէր կարող չանհանգստացնել Հայութեանը: «Ջգուելի պրովոկացիան շատ պարզ է», գրում էր Էջմիածնի դիւանապետ Բագրատ եպիսկոպոսը կաթողիկոսին¹: Վեհափառը՝ Գեորգ Ե. Սուրենեանցը, կարգադրում է ժամանակի հոգեւոր նշանաւոր գործիչներին՝ Թիֆլիսի եւ Արարատեան թեմի առաջնորդներ Մեսրոպ եւ Խորէն (Մուրադ-բէկեան)² եպիսկոպոսներին գործուղել պատերազմի դաշտ:

Ռազմաճակատ մեկնող յանձնախմբի մասնակիցների ընտրութիւնը կատարում է Վրաստանի եւ Իմերեթիայի Հայոց հոգեւոր թեմի առաջնորդ եւ Ազգային բիւրոյի պատուաւոր նախագահ Մովսէս եպիսկոպոս Տէր-Մովսիսեանը: Հայ հոգեւոր գործիչներից ու մտաւորականներից ձեւաւորուած խմբի կազմում էին Յովհաննէս

1 ՀՀԱԱ, ֆ. 288, ց. 1, գ. 7, թ. 31:
2 Նոյն թուականի ասորիին Խորէն եպ. Մուրադբէկեանը ցանկութիւն էր յայտնել ընդունելու թումանեանի նախագահած Հայ գրողների կովկասեան ընկերութիւն եւ յօգուտ գրական ֆոնդի 20 ու նստիւմութիւն էր արել: Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1914, թիւ 79, ասորիի 16, էջ 3:

Թումանյանը, Մեսրոպ Տէր-Մովսիսեանը, Շիրվանզադէն, Խորէն եպիսկոպոս Մուրադբէկեանը (յետագայում՝ կաթողիկոս), Ներսիսեան դպրոցի տեսուչ Յովսէփ Խունուցը, Երեւանի ապագայ քաղաքապետ Սմբատ Խաչատրեանցը, Թիֆլիսի Վերայի վանքի քահանայ Նիկողայոս Բաւոյեանը:

Այսպիսով, ռազմական գործողութիւնների թէժ պահին՝ Եղեռնի օրերին, Թումանյանը նետուում է Արեւմտեան Հայաստանի հրդեհների մէջ՝ այս անգամ փրկելու հայ կամաւորի պատիւը, մխիթարելու ժողովրդին, վերահաս աղէտներին դիմադրաւելու ուժ հաղորդելու, իսկ որ այդ պահին ամենակարեւորն էր, հասկանալու ռուսական քաղաքականութեան ներքնիմաստը:

Խմբի անդամները տարբեր յանձնարարութիւններ ունէին: Ըստ «Մշակի» հաղորդման՝ Յ. Խունուցը գնացել էր քաղաքների ինքնավարութեան կողմից «անդի կէտեր հաստատելու», եպիսկոպոսները՝ ժողովրդին մխիթարելու ու յուսադրելու, կամաւորներին՝ խանդավառելու: Իսկ ողջ հայութեանը հասցէագրուած լուրերի ճշտումը եւ դրանց հակադարձումը յանձնարարուած էր Թումանյանին՝ Ազգային բերրոյի կողմից, Շիրվանզադէին՝ ռուսական թերթերի: Եօթնեակի մեկնելու լուրը հաղորդեց ժամանակի մամուլը³:

Ժամանակի լրագրերը, թաքցնելով խմբի ուղեւորութեան բուն նպատակը, հաղորդում էին, որ նրանք մեկնել են ռազմաճակատ Վեհափառի կարգադրութեամբ՝ «հայ զինուորներին այցելելու եւ հոգեպէս մխիթարելու»⁴: Նոյնը ասում էր «Մշակի» ղեկավարների 5-ի թղթակցութեան մէջ, որտեղ նշում էր միայն Վեհափառի հրամանով պատերազմի թատերաբեմ մեկնած Երեւանի եւ Թիֆլիսի հոգե-

ւոր առաջնորդների՝ Մեսրոպ եւ Խորէն եպիսկոպոսների անունները⁵: «Հորիզոնը» ընդամենը արձանագրեց, որ խումբը մեկնել է պատերազմի դաշտ, եւ ժողովրդի մեծ բազմութիւն նրանց «բարի երթ» է մաղթել⁶: Բաքուի «Արեւի» հաղորդմամբ՝ խումբն ուղեւորուել է «Վեհափառ կաթողիկոսի կարգադրութեամբ՝ հայ զինուորներին հոգեպէս մխիթարելու համար»⁷:

Դուրս գալով Թիֆլիսից նոյեմբերի 15-ին՝ յաջորդ օրը Թումանյանը հասնում է Էջմիածին: Նախատեսուում էր Էջմիածնի եւ Իգդիրի վրայով անցնել Բայազետի շրջան, այնուհետեւ՝ Ալաշկերտի հովիտ, Բասէն⁸, Դելբաբայի (Դելի-Բաբա)⁹ եւ Խորասանի¹⁰ վրայով հասնել Զիւլին (Զիւլան)¹¹, այսինքն՝ լինել ռուսական զօրքերի դրաւած վայրերում եւ տեսնել պատերազմի բեմը: Բուն նպատակն էր լինել յատկապէս այն վայրերում, ուր կուում էին հայ կամաւորները:

Էջմիածնում տեղի է ունենում պաշտօնական հաղեպում կաթողիկոսի հետ: Վեհափառը դաղթականներին օգնելու, նրանց համար հանգանակութիւն կազմա-

3 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1914, թիւ 256, նոյեմբերի 16:
4 «Մշակ», Թիֆլիս, 1914, թիւ 258, դեկտեմբերի 5:
5 Նոյն տեղում:
6 «Հորիզոն», Թիֆլիս, 1914, թիւ 256, նոյեմբերի 16:
7 «Արեւ», Բաքու, 1914, թիւ 187, նոյեմբերի 19:
8 Արեւմտեան Հայաստանի Էրզրումի նահանգի Բասէնի գաւառակը 1909 թ. ունէր 169 գիւղ, որից 57-ը՝ հայաբնակ:
9 Դելբաբան (Դալիբաբա, Դալիլարբեան, Դելիլերբեան, Տելիպասպա) Բասէնի գաւառի հայաբնակ գիւղերից էր, որի մտակալքում պահպանուել է Մեմուս թագաւորի (810-786 թթ. Ք. ա.) սեպագիր արձանագրութիւնը:
10 Խորասանը Էրզրումի նահանգի Էրզրում գաւառի գիւղերից էր եւ Ստորին Բասէնի գաւառակի վարչական կենտրոնը (նոյն տեղ էր Բասէնի իշխանանիստ ասան, ուր, ըստ ԺԷ. դարի մի ձեռագիր յիշատակարանի, 1636 թ. օրինակուել է Աւետարանը:
11 Զիւլինը (Զիւն, Զիւնի) Խորասանի գիւղերից էր, որի բերդի մօտեքրում յայտնաբերուել է Ուրարտուի թագաւոր Մեմուսի սեպագիր արձանագրութիւնը:

կերպելու յանձնարարականներ է տալիս: Էջմիածնից կառքով դուրս են գալիս նոյեմբերի 17-ին՝ գիշերը, եւ Իգդիր հասնում 7 ժամ անց: Շիրվանզադէն գրում է. «Առաւօտեան կառքերով ուղեւորուեցինք Իգդիր, աւելի ճիշտ կը լինէր ասել՝ մտանք Կովկասեան աշխարհահազակ տիղմի մէջ... գոհ էինք, որ մեր կառքերը չթաղուեցին թանձր տիղմի մէջ, մենք ստիպուած չեղանք ճանապարհը ոտքով կտրել ... Գնում էինք թեթեւ սրտով, բայց հոգեպէս ճնշուած: Եթէ արդարեւ մեր լսածները ստոյգ են, անկասկած հայ ժողովրդի պատիւը վտանգի է ենթարկուած... »¹²:

Նոյեմբերի 18-ի առաւօտեան խումբը երկու անգամ հանդիպում եւ զրուցում է կորպուսի հրամանատար, գեներալ Պ. Ի. Օզանովսկու¹³ հետ՝ զօրաբանակի շտաբի գլխաւոր գեներալ Վ. Պ. Լեախովի¹⁴ ներկայութեամբ: Վերջինիս մասին Թումանյանը տեղեկացնում է. «Լեախովը Թեհրանի յայտնի Լեախովն է: Խիստ հայատեաց եւ չի ծածկում»¹⁵: Արշօ Շահխաթու-


նուն¹⁶ կարգադրում է ուղեկցել խմբին մինչեւ Արծափ՝ հնարաւոր վտանգներից ապահովելու նպատակով:

ՕՐԳՈՎՈՒՄ

Նոյեմբերի 19-ին յանձնախմբի անդամները շարունակում են ճանապարհը: Թումանյանին ուրախացնում ու ոգեւորում է Անդրանիկի հարիւրեակներից մէկի կողմից թուրք-պարսկական սահմանում Ղոթուրը գրաւելու, 100-ից աւելի թուրք եւ քուրդ զինուոր վերաւորելու եւ 200-ին գերելու լուրը: Դէպի Օրդով ճանապարհին թանձրացող տիղմի պատճառով ձիերի ընթացքը դնալով դանդաղում է: Հանդիպում են պատերազմական մթերք կրող ուղտերի քարաւաններին: Ուղտերի հարեւանութիւնից խուսափելով՝ մի հայ կամաւոր, չենթարկուելով Շահխաթունու զգուշացումներին, շեղում է խմբի ճանապարհը եւ նրանց կանգնեցնում ճահիճների առջեւ: Թումանյանը երկու անգամ վայր է ընկնում ձիուց, ինչպէս վկայում է Շիրվանզադէն, «այժմ կանգնած էր ցեխաթաթախ երկվարի քով մի ձեռով բռնած նրա սանձը, միւսով իր կրկնակօշիկները» (Շ 9, 106)¹⁷: Կարելի է միայն ենթադրել, թէ ինչպէս էր սաստիկ ցուրտն ու խոնաւու-

12 Շիրվանզադէ, Երկերի ժողովածու, հտ. 9, Երեւան, 1961, էջ 98-99 (այսուհետեւ սոյն ժողովածուից արտող մէջբերումները կը լրուեն տեքստում փակագծերում նշելով Ծ., հատոր, էջ):
13 Օզանովսկի (Օզանով) Պետր Իւանովիչ - ռուսական բանակի բարձրաստիճան գիմուրական, 1877-1878 թթ. ռուս-թուրքական եւ 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմների մասնակից, 1904 թ. գեներալ-մայոր, իսկ 1910-ից՝ գեներալ-լէյտենանտ:
14 Խօսքը վերաբերում է 1912-ից գեներալ-մայոր, այնուհետեւ՝ գեներալ-լէյտենանտ Վլադիմիր Պլատոնովիչ Լեախովին (1869-1920 թթ.), ով Առաջին աշխարհամարտի տարիներին Կովկասեան առաջին զօրաբանակի շտաբի գլխաւոր գեներալ էր, իսկ 1917-ից՝ Կովկասեան առաջին կորպուսի հրամանատար: Բաթումում սպանուել է անչալտ անձանց կողմից:
15 Յ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 8, Երեւան, 1999, էջ 351 (այսուհետեւ սոյն ժողովածուից մէջբերումները կը լրուեն տեքստում փակագծերում նշելով հատորն ու էջը):

16 Շահխաթունի Արշօ (Արշաիր) Վաղարշակի - (19.02.1885, Ալեքսանդրապոլ - 04.04.1957, Փարիզ), դերասան, գիմուրական (պահեստի սպայ (պրոպագանդիստ): 1918 թ. նշանակուել է Երեւանի գիմուրական պարէտ եւ պաշտօնավարել մինչեւ 1920 թ. վերջերը՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը: 1928 թ. նախաձեռնել է «Անդրանիկ» ֆիլմի նկարահանումը՝ համընդ գալով Անդրանիկի եւ նրա հօր դերակատարմամբ:
17 Աւելի ուշ Շիրվանզադէն խոստովանում է. «Յետոյ զգացի, թէ նա որքան խելօք է վարուել այդ թանկագին ոտնամաններն այնպիսի խնամքով պահելով: Ես իմ կրկնակօշիկներից մէկը թողեցի ճահիճի մէջ եւ յետոյ շատ ու շատ տուժեցի, երբ ստիպուած էի քայլել ստոյնների վրայ» (Ծ., էջ 106):



Թիւնը երեք ժամից աւելի տանջել վատա-
ւողջ թոքերով բանաստեղծին:

Նոյեմբերի 19-ի ուշ երեկոյեան կանգ
են առնում Օրգովում, որը ուսուսական վեր-
ջին սահմանակէտն էր: Պատերազմի վայ-
րերում շրջելիս Թումանեանի լաւատեսու-
թիւնը տեղի է տալիս մօտալուտ արհա-
ւիրքների կանխազգացմանը:

Այնուհետեւ յանձնախումբն անցնում
է Չինգիլի (Կարկառ) լեռնանցքը՝ ճանա-
պարհի երկու կողմում տեսնելով սատկած
ձիեր ու եզներ, ուղտերի քարաւաններ:
Գնում են ձնաբուքի ուղեկցութեամբ,
ձեան վրայ ուղտերի թողած հետքերով,
տեսնում այն վայրը, ուր առաջին անգամ
տեղի էր ունեցել ուսանողի ու թուրքերի
ընդհարումը: Հանդիպում են քրդական
խղճուկ գիւղերի, որոնց բնակիչները փա-
խել էին: Յաջորդ օրը Օրգովից ուղեւոր-
ւում են Արծափ:

ԱՐԾԱՓՈՒՄ

Նոյեմբերի 20-ի կէսօրին հասնում են
թուրքական մաքսատուն-կայան՝ Ղարա
անունով, որը ուսանողը վերանուանել էին
Կարէ: Թումանեանն այցելում է որպէս
«հիւանդանոց» ծառայող խարխուլ, հողէ
յատակով ու բորբոսնած պատերով շինու-
թիւն: Գրողը նկատում է, որ «չըջկայ
քրդերի գիւղերի շուրջը վարած հողեր
չկան: Վար ու ցանքը թողած է հայ գիւ-
ղացիներին» (8, 355):

Վեց ու կէս ժամում անցած 32 վերստ
ճանապարհի դժուարութիւնները յաղթա-
հարելով, ճահճուտների մէջ ընկնելով՝ նո-
յեմբերի 20-ին՝ օրուայ երկրորդ կէսին,
հասնում են Արծափ¹⁸: Բանաստեղծի ու-

շաղրութիւնից ոչինչ չի վրիպում, ո՛չ կա-
քաւների երամները, ո՛չ քրդական խղճուկ,
աւերակ դարձած գիւղերը, որոնցում
միայն վառելիքայտ էր մնացել ուսուսական
զօրքի համար, ո՛չ Ահմադ աղայի ապա-
րանքի մնացորդները, ո՛չ ապականու-
թիւնն ու կեղտը: Քրդերը Արծափը կողոպ-
տելուց յետոյ պատսպարուել էին լեռնե-
րում (Շ., 9, 115): Թումանեանի ուշադրու-
թիւնը գրաւում է բարձրավանդակի վրայ
կառուցուած հին եկեղեցին՝ իր մեծ կորա-
ձեւ դմբէթով: Արեւմտահայ առաջին
գիւղն էր, ուր ոտք էր դնում բանաստեղ-
ծը: Նա տեսնում է բերդաւանը՝ շրջապա-
տուած կիսաւէր պարիսպներով, Ս. Գրիգո-
րի աւերակ վանքը եւ Ծաղկավանքը, որը
չէն ու կանգուն էր մինչեւ 19-րդ վերջը:
Կանայք ու երեխաները տներից դուրս են
գալիս՝ դիմաւորելու Թումանեանին: Գիւ-
ղը դպրոց չունէր, թէեւ այն բացելու ցան-
կութիւնը մեծ էր: Իւրաքանչիւր տուն 30-
90 օրավար հող ունէր:

Ռուսական զօրքի առաջխաղացման
լուրն առնելով՝ արծափցիները սկզբում ու-
րախացել էին: Նրանց գիւղում թուով
1500 թուրքական զօրք էր կանգնած: Յան-
կարծակիի գալով՝ թուրք համիդիէն հասց-
րել էր փախուստից առաջ թալանել մի քա-
նի հայ տներ, տարել՝ ինչ որ ճանապարհին
պատահել էր: Թուրքերը բռնի ուժով Ար-
ծափից գերել էին 90 հայ զինուորների, ո-
րոնցից 82-ին յաջողուել էր ազատուել:

Ռուս զինուորներն ապրում էին հայե-
րի տներում, որոնց «սենեակները փոքր,
խեղդուած ու աղքատ» էին (8, 355), ան-
վճար օգտագործում էին բնակիչների ձմե-
ռուայ ողջ վառելիքայտը, իսկ փայտեղէն
(հիմնականում՝ բարդի) գիւղը չունէր. Իգ-
դիրից էր բերում: Գիւղի ողջ վառելիքն
արագօրէն սպառուում է: Թումանեանն ան-

10, իսկ որոշ ընտանիքների 70- 80, Առյուծիկ՝ 100
դէստատին արգասանք վարելահող (Շ., 9, 120):
1914 թ. Արծափից գաղթեց 100 հայ ընտանիք:

18 Արծափը (Արգաս, Արգաք, Արգափ) Բայազետի
գաւառի բերդաւան է: Գտնուում է Արծափ գետի
ափին՝ Չինգիլի լեռնանցքի մերձակայքում: Թու-
մանեանի ուղեւորութեան պահին Արծափն
ունէր 120 տուն եւ հարուստ էր վարելահողով:
Իւրաքանչիւր ընտանիքի հասնում էր ստնուագն

միջապէս մտածում է դրսից արծափցիներ-
րին օգնութիւն՝ վառելիքայտ հասցնելու
մասին (8, 355):

Ուղեւորութեան ընթացքում ամե-
նաճնշողը հայ կանանց բռնաբարութիւն-
ների մասին տեղեկութիւններն էին: Բա-
նաստեղծի օրագրում կարդում ենք. «Կա-
նանց բռնաբարութիւններ անխտիր՝ քրդի,
թուրքի ու հայի, կատարուել է սոսկալի
չափով - նահանջելիս համիդիականները,
այնուհետեւ կազակները, մինչեւ այժմ, ա-
պա անխտիր բոլոր թալանչիները: Խաչա-
տուրը ասում է՝ աչքովս տեսայ նշանաւոր
մարդկանց կանայք Մոսուլում ուղղակի
ընկած էին ու չէին կարողանում վեր կե-
նալ, էնքան բռնաբարել էին իրար ետեւից,
ամենաքիչը մի 40 հոգի. Դիաղինում գի-
շերը կանանց ճիչեր էին լսում» (8, 377):

Արծափում խմբին յատկացուած օ-
թեւանը մի մեծ սենեակ էր՝ հողէ յատա-
կով, կաւէ պատերով, ձուածեւ փայտեայ
առաստաղով, երկաթէ վառարանով: Ծա-
նապարհի ցրտից ու ձնաբուքից յոգնած
արեւելահայ գործիչներին այդ սենեակը
«արքունական ընդունելութեան» սրահ է
թուում, մանաւանդ, երբ գինու փոքրիկ բա-
ժակներով թէյ են մատուցում: Այստեղից
նոյեմբերի 20-ին առաջին անգամ այս ու-
ղեւորութեան ընթացքում Թումանեանը
նամակ է գրում ընտանիքին. «Սիրելիք,
հէնց նոր ենք եկել Արծափ. Մի օրում, բո-
լորս մի թախտի վրայ, աջ ու ձախ թինկը
տուած՝ թէյ ենք խմում: Երէկ դուրս ե-
կանք Իգդիրից, ընկանք մեծ ճահճուների
մէջ (Մասիսի թաքթաբուտները), իսկ էսօր
կէսօրին Չինգիլի նշանաւոր լեռնանցքը
անցանք եւ մեր առջեւ բացուեց Հին Բա-
յազետի հովիտն ու քաղաքը եւ Մասիսը՝
Տաճկաստանի կողմից» (10, 218): Ներս է
գալիս գիւղի տարէց քահանան եւ պատ-
մում է նախ թուրքերի, ապա քրդերի կող-
մից գիւղն ամբողջութեամբ թալանելու
մասին: Երիտասարդ անգէն հայերը քա-

չուել էին լեռները եւ, բարեբախտաբար,
քրդերը կանանց ու երեխաներին չէին կո-
տորել: Այնուհետեւ եկել էին ուսանողը:
Հայերը բացել էին իրենց շտեմարանները
եւ ոչինչ չէի խնայել նրանց համար, թէեւ
այդ պահին չունէին ո՛չ ցորեն, ո՛չ գարի
ու դարման, ո՛չ էլ, մանաւանդ, վառելիք:

Արծափում քրդերին զինաթափ էին
արել տեղի բնակիչները. «Տաճկահայերն էլ
իրենց քաջութիւնը ցոյց են տուել գլխա-
ւորապէս քրդերին զինաթափ անելիս, ինչ-
պէս եւ Արծափ» (8, 358): Շուտով Թումա-
նեանը տեղեկանում է. «Հրաման եկաւ գի-
նաթափ անել հայ թէյ քուրդ՝ ամէնքին» (8,
357): Նոյեմբերի 20-ի առաւօտեան գնում
են Արծափի եկեղեցի, ուր հաւաքուած էր
տեղի հայ բնակչութիւնը: Արծափում բո-
լոր տները պատերի միջոցով դաղտնի հա-
ղորդակցութիւն ունէին միմեանց հետ,
վտանգի ժամանակ միմեանց զգուշացնե-
լու նպատակով. «Կարելի է գիւղի մի ծայ-
րից մտնել առաջին պատահած տունը եւ
դուրս գալ միւս ծայրում, առանց փողոց-
ները տեսնելու» (Շ., 9, 121): Եկեղեցի էին
գնում մէկմէկու միացած կտուրների վրա-
յով, որոնք կցուած էին միմեանց միաչափ
քառակուսիներով, «այնպէս որ գիւղը
բարձրից նմանում է շախմատեան տախ-
տակի» (Շ., 9, 121):

Քրդերը եկեղեցին թալանել էին ամ-
բողջութեամբ, տարել էին խաչերն ու խաչ-
վառները, սեղանի արդուզարդը, գրքերն ու
գրականները, նոյնիսկ պատերի միջից տա-
րել էին այն ամէնը, ինչը փայտից էր, ու
այրել էին: «Հին եկեղեցի է,- գրում է Թու-
մանեանը: - Ժողովուրդը եկել էր: Խեղճ,
կուչ եկած: Գաղթական քահանան: Մես-
րոպ եւ Խորէն եպիսկոպոսները մաղթանք
կատարեցին: Եկեղեցու բակը մտնելով՝ ա-
ռաջինը աչքներին ընկաւ գերեզմանը, եօ-
թը զնդակով սպանած Օրմանի հօր գերեզ-
մանը: Խօսեց Մեսրոպ եպիսկոպոսը: Ասաւ,
որ էս նեղութիւնները ժամանակաւոր են, կ-

'անցնեն եւ այլն: Ժողովրդից խօսեցին, թէ՛ վառելիքի, թէ՛ տաւարի, ուտելիքի համար... եւ առաջին անգամ կայսերական մաղթանք կատարուեց Արծափի հին հայոց եկեղեցում ու կարդացուեցին համապատասխան աղօթքները» (8, 356):

ԲԱՅԱԶԵՏՈՒՄ

Արծափից խումբը նոյեմբերի 21-ին ուղեւորուում է վիթխարի ժայռերով շրջապատուած անմատչելի թուացող Բայագետ¹⁹: 32 վերստ ճանապարհը յաղթահարում են 4 ժամում: Ռազմի դաշտն այնքան մօտ էր, որ Բայագետ մտնելիս Մոսուկի կողմից լսուում էր թնդանօթածգուծիւն, իսկ «միւս կողմից հանգիստ կղկղում էին կաքաւները ժայռերի մէջ» (8, 360):

Բայագետում տները կառուցուած էին կարմրաւուն քարերով, ծուռուծուռ փողոցները զառիթափ ու դժուարանցանելի էին: Հայերը հիմնականում ապրում էին Աւդիգետի թաղում: Նրանց գլխաւոր զբաղմունքը առեւտուրն ու արհեստներն էին: Նախկինում զբաղուել էին նաեւ երկրագործութեամբ ու անասնապահութեամբ: Քաղաքի 200 խանութների ու կրպակների մեծ մասը պատկանում էր հայերին: Գործում էր Արամեան վարժարան, որը երկսեռ էր: Բայագետում էր նստում մութարիֆը, հայերի առաջնորդական փոխանորդը եւ ուսակական դեսպանը: 1914 թ. քաղաքն ունէր 5000 բնակիչ, որից 2000-ը՝ հայ, մնացածը՝ քուրդ ու թուրք: Քաղաքում կար երեք մզկիթ, երկու հայկական եկեղեցի՝ Ս. Կարապետ եւ Ս. Վարդան (Ապտիկոր թաղում), ինչպէս նաեւ՝ Ամենափրկիչ Հնագոյն հայկական եկեղեցու աւերակները, Դարոյնք եւ Լուսաղբիւր, Թուխ Մանուկ, Ս. Սիմոն, Ղզրոյ եւ Գառնիկ աղբիւր ուխտատեղիները: Երկու բերդերից մէկը քա-

19 Խօսքը Էրզրումի Ասիական Բայագետ գաւառի Բայագետ գաւառակի վարչական կենտրոն բերդաքաղաքի մասին է:

ղաքի ծայրում էր. միւսը՝ քաղաքից դուրս՝ ժայռերի մէջ: Անտոիկ Բայագետից թուրքերը ռազմական նկատառումներով փախել էին առանց մի կրակոց արձակելու: Ըստ Թումանեանի՝ թուրքերն ու քրդերը իրենց ունեցածի մի մասը փախցրել էին ու իրենք էլ փախել, որ յետոյ ետ գան ու հայերի նկատմամբ հաշուեյարդար տեսնեն, բայց հէնց առաջին օրը սկսուած սոսկալի բուքի ու փոթորիկի պատճառով չէին կարողացել վերադառնալ, եւ երեք օր քաղաքը մնացել էր հայերի ձեռքին: Որոշ թուրքեր իրենց հրացանները պահ էին տուել հայերին. ոմանք էլ թաքնուել էին հայերի տանը:

Քաղաքի մօտ յանձնախմբին դիմաւորում են մի քանի ձիաւորներ, որոնց պարագլուխը քահանայ էր: Դիմաւորելու էր եկել նաեւ մեծ բազմութիւն: Տեղի ողջ բնակչութիւնը աղուհացով ու երկիւղածութեամբ է ընդունում եկուորներին: «Զարմանալի բան,- գրում է Շիրվանզադէն,- գուցէ առաջին օրինակը: Աղ ու հաց առաջարկում են ե՛լ թուրքերը, ե՛լ քրդերը: Ինչո՞ւ: Երեւի իրենք էլ չգիտեն» (Շ., 9, 126-127): Թումանեանն անմիջապէս բազմամարդ թափօրով ուղեւորում է քաղաքի կիսաւէր ու թալանուած եկեղեցի, ուր հնչում են Մեսրոպ եպիսկոպոսի մխիթարանքի խօսքերը: Բանաստեղծը վկայում է նաեւ Բայագետի շրջանում թուրքերի ահաբեկչական ծրագրերի մասին: Երբ թուրքական զօրքը պարտադրուած է եղել նահանջել, նրանց հետ հեռացել է նաեւ թուրք բնակչութիւնը: Սակայն մինչեւ այդ, կողոպտելուց բացի, թուրքերը հասցրել էին սպանել միայն 4 հայի, մինչդեռ նախատեսել էին քաղաքի ողջ 3700 հոգի բնակչութեանը սրի քաշել. այդ նպատակով որոշել էին ձերբակալել ու «խեղդել» 51 յայտնի անձաւորութիւնների, որոնք կարող էին արգելք լինել. «Տեւորի մեծ ծրագիր են ունեցել,- գրում է Թումանեանը,- 51 հոգի Բայագետ, ապա թէ նահանջելիս ջնջել Արծափ եւ Մոսուկ» (8, 357): Սա-

կայն իրենց հերթական դժոխային ծրագիրն իրականացնել չէին կարողացել երկու պատճառով: Նախ՝ հայերին այդ մասին տեղեակ էր պահել հայերի «հազուադիւրս» բարեկամ Մամեդ-Բէգ անունով մի քուրդ ցեղապետ, եւ ապա՝ քաղաք էր հասել ուսակական զօրքի՝ Բայագետի մատոյցներին հասնելու լուրը:

Թումանեանը Բայագետում իջեւանել է Բաղդասար Քրմոյեանի տանը: Տանտէրը գրողի տպաւորութեամբ մի բարեհամբոյր ու շատ հիւրասէր ծերունի էր՝ մասնագիտութեամբ փաստաբան, թէեւ չունէր նոյնիսկ միջնակարգ կրթութիւն:

Այդ օրերին մէկը միւսից սահմուկեցուցիչ լուրեր էին հասնում Արեւմտահայաստանի տարբեր մասերից: Թումանեանը լսում է ակննատեսի, ով պատմում է, թէ ինչպէս են թուրքերը հայաբնակ Խաչանի²⁰ գիւղում կոտորել ամբողջ բնակչութեանը (600 տուն): Ուշագրաւ է, որ շատ աւելի ազդուում են Կովկասից եկած յանձնախմբի անդամները, քան բայագետցիները, ովքեր մշտապէս ապրում էին նոյն ճակատագրին արժանանալու ահն ու սարսափը:

Բանաստեղծը ցաւով նկատում է, որ, բացի քուրդ ազդեցիկ մարդկանցից, նաեւ վրացի ծառայողներն են ուսաներին տրամադրում հայերի դէմ. «Հայերի դէմ են զինուած աւելի վրացի ծառայողները եւ առհասարակ ծանր մեղադրանքներով շատ գրութիւններ են գնացել վերին իշխանութեանը» (8, 357): Առանց լուրջ պատճառի կարող էին բանտ նետուել նրանք, ովքեր հայերին օգնութեան ձեռք էին մեկնում: Թումանեանը պատմում է. «Մի ջաղացպան, որ կարգին մարդ է, օգնել է հայերին, մեղադրուում է, իբր թէ կամեցել է մի օֆիցեր սպանել եւ դցել քրդերի վրայ - բանտարկուած է» (8, 357):

20 Խաչանի - Էրզրումի Ասիական Բայագետ գաւառի գիւղ-աւան:

Գեներալ Մ. Ն. Դրեագիրը ակնարկում է, որ հայերը նեղում են քրդերին: Երբ նրան հակադարձում են, թէ հալածուողը հայն է, նա պատասխանում է. «Մինչեւ այժմ այո՛, բայց այժմ հայերն են սկսել նեղել քրդերին» (Շ., 9, 129): Կարելի է պատկերացնել, թէ որքան մեծ պէտք է լինէր բանաստեղծի տարակուսանքն ու հիասթափութիւնը գեներալ-նահանգապետի՝ հայերին պատժելու բացայայտ ակնարկից: Եւ որքան էլ նա ժպտար, դրանից Թումանեանի տրամադրութիւնը չէր փոխուելու կամ մտահոգութիւնը պակասէր: Նոյն օրերին ինչպէս Արծափում, այնպէս էլ այստեղ թէ՛ քրդերին եւ թէ՛ հայերին զինաթափ անելու հրաման էր ստացուել, ինչը փորձում է հերքել ուսու գեներալը: Թումանեանը Դրեագիրին հարցնում է՝ եթէ հայերին զինաթափելու հրաման չկայ, ինչու են ուսաները խուզարկում հայերի տները եւ նրանցից գէնքերը խլում: Բացատրութիւնը առաւել քան անհեթեթ էր. իբր թուրքերն ու քրդերը գնալիս իրենց գէնքերը պահ էին տուել հայերին, որ վերադարձին նորից ետ ստանային, ուստի հայերից բռնագրաւում էին թշնամու գէնքերը (8, 359): Բնակականաբար, գրողը չէր կարող հաւատալ Դրեագիրին, բայց քանի որ պաշտօնապէս չէին խոստովանում հայերին զինաթափելու փաստը, արձանագրում է հայերին զինաթափելու այն վայրերը, որտեղ դա արւում էր բացայայտօրէն: Թումանեանի վկայութեամբ՝ ուսաները Արեւմտեան Հայաստանի միայն որոշ մասերում էին հայերին զինաթափում. «Բայագետի շրջանում հայերից գէնք չեն առնում, իսկ Ղարաքիլիսայում հաւաքում են» (8, 365):

Նոյեմբերի 22-ի առաւօտեան Թումանեանը հանդիպում է քուրդ գնդապետ Մամմադ բէկ Ամար աղա օղլուին: Նա 800 քուրդ ձիաւորներով ու իր ցեղով յանձնուում է ուսակական իշխանութիւններին: Նոյն օրը երեկոյեան Բայագետի եկեղեցում

կատարում է եկեղեցական մաղթանքը ուսուսական զորքի ու զինուորական իշխանութեան, գեներալ նահանգապետի ու իր օգնականի ներկայությամբ: Եկեղեցում խմբուած բազմութեան առջեւ, որոնց մէջ քիչ չէին նաեւ ցնցոտիաւոր կանայք՝ գլխարկի փոխարէն շալեր կապած, ելոյթ են ունենում խորհն եպիսկոպոսը, Սմբատ Խաչատրեանցը եւ Թումանեանը: Եկեղեցու արնաշաղախ պատերի մէջ բանաստեղծը փորձում էր յոյս ներշնչել հոգեւորացու ու արիւնաքամ ժողովուրդին: Նրանց ելոյթները, ինչպէս նաեւ Նիկոլի երգը, արցունքներ են կորզում, թւում է, արդէն ցամաքած աչքերից, հիացմունք պատճառում ուսուս զինուորներին: Եկեղեցուց դուրս գալուց յետոյ տեղացի երիտասարդները Թումանեանին եւ նրա ընկերակիցներին ուղեկցում են քաղաքի արեւելեան ծայրերում գտնուող Բայազետի՝ զօրանոցի վերածուած բերդերից մէկը: Ճանապարհին նկատում են աղբերի մօտ հերթի սպասող կանանց ու երեխաների, սակայն չեն լսում ոչ մի մանկական ուրախ ձայն. միայն մռայլ ու անփայտ, «վաղաթառամ» դէմքեր: Տպաւորում են թէ՛ պալատը, թէ՛ բերդի մաս կազմող բանտը՝ խոնաւ, ծխից սեւացած պատերով: Սակայն քաղաքից դուրս ժայռերի մէջ գտնուող ամրոցն այցելելու ժամանակ չեն ունենում: Թումանեանը հանդիպում է մի քանի թուրքի, որ ոչ միայն չէին փախել, այլեւ գալիս էին հայերի նկատմամբ իրենց բարեկամական վերաբերմունքն արտայայտելու: Տանտէրը յարգանքով ներկայացնում է յայտնի կալուածատէր եւ դատարանի անդամ Իսմայիլ էֆենդի Նալբանդ Չաղէին. նրանք հայերի ինքնապաշտպանական կոմիտէի անդամ էին եւ շատ հայերի կեանք էին փրկել կործանումից: Այդ պահին նրանց պաշտպանում էին հայերը: Այցի են գալիս նաեւ հայ վաճառականներ եւ մի պատանի՝ «զարմանալի նուրբ ու ինտելիգենտ դէմքով» (8, 362): Նա հայ բնակչութեանը խորհուրդ էր տալիս հակադար-

ձել իրենց անուան շուրջ տարածուող բամբասանքներին: Բանաստեղծը վկայում է. «Քրդերը հայերին թալանել են նախքան ուսուսների գալը: Անցել է մի ամիս, այժմ, երբ հայը գնում է իր ապրանքը վերադարձնում, գալիս են գանգատուած, թէ հայերը մեզ թալանեցին: Իսկ հայերը սրան առանձին նշանակութիւն չեն տալիս, մինչդեռ սրանով տրամադրութիւն է ստեղծուում» (8, 357):

Թումանեանը համոզուած է, որ ուսուսները բացարձակ տարբերութիւն չէին դնում կամ չէին ուզում դնել կամաւորական խմբերի եւ իրենցից թալանուած ապրանքը ետ բերող հայկական ինքնապաշտպանական խմբերի միջեւ: Նա նշում էր, թէ չէր հաւատում ուսուսների միտումնաւորութեանը, այնուամենայնիւ, խորհում էր, որ այդ մասին պէտք է բարձրաձայնել ու տեղեակ պահել թէ՛ Ազգային բերրոյին, թէ՛ ուսուսական իշխանութիւններին: Թումանեանի համար միշտ էլ սկզբունքային է եղել, անկախ ամէն ինչից, ճշմարտութեան բացայայտումը: Նա համոզուած էր, որ սուտ լինի, թէ թիւրիմացութիւն, որքան էլ այդ պահին որոշակի վնաս չտայ, միշտ պէտք է պարզել: «Աւտոնոմիան» սաստիկ գրգռում է կառավարական պաշտօնեաներին, վկայում է Թումանեանը, եւ յաճախ հեղձութեամբ հարցնում. «Հը՞, շուտով ձեր թագաւորը կը լինի, հա՞... Ձինուորական գլխաւորը վկայում է, որ հայերը, զինուորները կուում են առիւծի նման եւ շատ քաջ են, իսկ քրդերը ոչխարի հօտ են» (8, 358):

Պատերազմի վայրերում թալանն ու նրա մասին պատմութիւնները սկիզբ ու վերջ չունէին: Թալանում էին ոչ միայն թուրքերն ու քրդերը, այլեւ հէնց ուսուսները, ընդ որում՝ միանգամայն բացայայտ: Թումանեանի գրառումներում հանդիպում ենք հետեւեալ փաստերին. ուսուսները Մէյրամանայ գիւղի տանուտէր Թաթոս Սաֆոյեանի տանից մի քանի հարիւր ուրբու-

ապրանք են տարել, տուել են միայն 18 ու., Բայազետում Յովհաննէս Քրմոյեանից 300 ու. գարի են տարել, տուել միայն 60 ու. եւ դեռ տանտիրոջն էլ ծեծել, 12 000 փութ խոտ են տարել գիւղացիներից միանգամայն անվճար (8, 358):

ԴԻԱԴԻՆՈՒՄ

Բայազետից յետոյ Թումանեանն ուղեւորում է Դիազին: Գեներալ-նահանգապետ Դրեազինը, հաշուի առնելով հնարաւոր վտանգները, խմբին ուղեկցող զինուորների թիւը հասցնում է 25-ի: Շիրվանզադէն վկայում է, որ լսելով թշնամուն հանդիպելու վտանգի մասին, «Յովհաննէս Թումանեանը իր բազմաթիւ կապոցների միջից դուրս բերեց մի մեծ արկղ եւ քարշ արաւ կողքին: Ասաց, որ այդ արկղի մէջ ամփոփուած է աշխարհի ամենասուսկալի զէնքը: Ես վախեցայ: Խուսուսեցի Ձեռք խանի չալ փափախը իր ճաղատ գլխին սեղմելով, դուրս բերեց մի սեւ ատրճանակ եւ, հաւաստիանալով, որ փամփուշտները չեն ընկել, հանգստացաւ եւ քաջարի ժպտաց» (Շ., 9, 135):

Չնայած ուսուս զինուած թիկնապահների մշտական առկայութեան՝ Թումանեանը իր զէնքից՝ ծանր մատուցելից, անբաժան է եղել: Ընդ որում, խորհն եպիսկոպոսն ու Սմբատ Խաչատրեանը նոյնպէս զինուած էին: Իսկ Շիրվանզադէն, ով միակն էր խմբում, որ առանց զէնքի էր, զաւեշտով է ներկայացնում խմբի անդամների՝ կուռի պատրաստ լինելը. հէնց այս անլրջութիւնն էր, որ Թումանեանի վրդովմունքն էր առաջացրել:

Դիազինի մօտերքում դարձեալ հանդիպում են սաստիկ ձիեր, ուղտեր, եղներ, կոտրած կառքերի տարբեր մասեր, կուում գոհուած եւ շուրջ մէկ ամիս անթաղ մնացած թուրքերի ու քրդերի դիակներ: Թումանեանը վկայում է. «Ճամփի երկու կողմը, Դիազինից մօտիկ, տեսանք ընկած համրիէ քրդերի դիակները, որը կիսամերկ,

որը շորը հագին: Մի ամիս առաջ հոկտեմբերի 22-ի կուում էին սպանուած: Կողքի լեռան լանջում շատ կան, ասում էր օֆիցերը» (8, 363): «Դիակների ձորը» սարսուռ է ազդում: Բոլորը ճնշուած ու պատերազմի, մարդկային ողբերգութեան մասին խոհերով լսում են ուղեկցող զինուորներից մէկին, ով մասնակցել էր Դիազինի ճակատամարտին եւ պատմում էր բոլոր մանրամասները: Թումանեանը տեսնում է մեծ տարածութիւններով բաժանուած ամալի ու դատարկ գիւղեր, ուղտերի եւ ձիերի քարաւաններ, որ գնում էին Իգդիրից պաշար բերելու: Ըրզլ-Դիզուում հանդիպում է ուսուս հարիւրեակների, որոնք վերադառնում էին երկու ուսուս զինուոր սպանելու համար Մոսուսի շրջակայքի քրդերին պատժելուց, նրանց եօթ գիւղերը հիմնայտակ աւերելուց յետոյ:

Նոյեմբերի 23-ին Դիազինում էին, որը մի մեծ քրդաբնակ գիւղ էր՝ փոքրիկ լեռան ստորոտում, ուր կային նաեւ հանքային ջրեր: Այն նոյնպէս բացառութիւն չէր որպէս համատարած թշուառութեան ու աղքատութեան վայր: Քրդերի տները, ըստ բանաստեղծի նկարագրութեան, փոքրիկ էին, խաւար, կաւաշէն, ցածր դռներով, նեղ պատուհաններով եւ սոսկալի կեդտոտ: Այստեղի 400 տնից միայն 14-ն էր հայերին պատկանում: Յանձնախումբը գիշերում է գիւղի աւազ («ստարշինա»), «յայտնի Մանուկի թոռ» Մելքոն (Միհրան) Մանուկեանի տանը: Շիրվանզադէն այսպէս է նկարագրում իրենց կացարանը. «Մեր օթեւանը ոչ խրճիթ էր, ոչ գոմ, այլ մի տեսակ փոս, խոնաւ, կեղտոտ, ցուրտ... փոսի մի անկիւնում դրած էր մի ժանգոտուած եւ ծակծկուած երկաթեայ չորքոտանի՝ վառարան անունով... Միհրան Մանուկովը երկու կտոր փայտ բերեց, վառեց, նստեց հողէ յատակի վրայ եւ սկսեց փչել... Շուտով փոսը լցուեց ծխով այնպէս, որ մենք իրարու չէինք տեսնում» (Շ., 9, 41): Թումանեանը եւս քրդաբնակ այդ

գիւղի տները նկարագրում է որպէս «փոքրիկ, մուլթ, անթրծիլ, կաւաշէն, ցած դռներով, նեղ պատուհաններով, սոսկալի կեղտոտ» (8, 364): Գետնին քնելու համար ուս հրամանատարը խմբի անդամներին 6 կարպետ («խալիչա») է ուղարկում: Երեք-չորս գիշեր շարունակ Դիաղինում փախած քրդերի շների «խմբովին» ոռնոցը թոյլ էր տալիս հանգստանալ որեւէ մէկին:

Դիաղինի միջով անցել է 6000-հոգանոց թուրքական զօրաբանակ՝ բաղկացած հիմնականում քրդերից, սակայն այստեղ բնակիչներին առանձնապէս վնաս էր հասցնում: Այնուհետեւ 14 տուն հայեր վրէժ էին լուծել 400 տուն քրդերից (Շ., 141): Գիւղի փոքրաթիւ հայ ազգաբնակչութիւնը զբաղւում էր հիմնականում արհեստներով ու վաճառականութեամբ: Ամիսներ շարունակ բնակիչները կերակրել էին թուրք համրիկէին, իսկ յետոյ՝ արդէն ուսներն էին տիրացել թուրքերի՝ գիւղից հաւաքած տուրքին՝ ցորեն, գարի եւ այլն: Հայերը, ովքեր սպասում էին ուսներին, քրդերի ու թուրքերի հեռանալուց յետոյ իրենց տների դռները ու ներսի պատերի վրայ խաչեր էին նկարել՝ խուսափելու համար նոր կոտորածից: Թումանեանն արձանագրում է նաեւ այս շրջանում քրդերի ոչ միասնական վարքագծի մի քանի օրինակ. նրանց մի մասը փախչում էր եւ միանում թուրք համրիկէին, միւս մասը ուսների կամ հայերի հետ կուռում էր ազգակիցների դէմ: Գրողի օրագրում կարդում ենք. «Մուստաֆա բէկն անձնատուր է եղել, իսկ իր որդին Դուլթախի²¹ տակ ալայը²² կուռում էր մերոնց դէմ ... Ռասուլ բեկը անձնատուր է եղել, նրա եղբայրները

Ռոզամ բէկ, Ջամշուդ բէկ, Սայիդ բէկ եւ Խալիլ բէկ ուսների հետ էին առաջ շարժուում: Սալիմ փաշայ անձնատուր եղաւ, խոստացաւ բերի իր ալայները, ու չեկաւ:

Անձնատուր եղան Սայիդ բէկ, Այիբ փաշայ, Թորունի եւ Ռասուլ բէկ, եւ Ամար բէկ եւ Աբդլ Բարի Բաղիմ, Նազիր բէկ օղլի: Եւ ոչ ոք չբերին յետները, եւ նրանց ալայները կուռում են մերոնց դէմ» (8, 364-365):

ԹԱՂԼԻՉԱՅՈՒՄ

Չորս օր Դիաղինում մնալուց յետոյ նոյեմբերի 27-28-ին յանձնախումբը շարունակում է ճանապարհը երկու լեռնա-շղթաների միջեւ ընկած Ալաշկերտի հովիտով, Եփրատի ափերով: Ճանապարհին դարձեալ հանդիպում են սպանուածների. «Դիաղինից դենը՝ Քոչոյի գեաղուկում տեսանք դիակներ» (8, 367): Հազուադիւր ծառերը յիշեցնում են յորդանների վայրենի վերաբերմունքը բնութեան նկատմամբ: Փոքրաթիւ հայերը փորձում են ծառեր ու այգիներ տնկել, իսկ հարեւան ցեղերը դրանք կտրում են: Լսում են մի հայի վկայութիւն այն մասին, թէ ինչպէս քուրդ աւազակախումբը ծառահատում է հայի նորատունկ այգին՝ ասելով. «Մենք չունենք այգիներ, դուք էլ չպիտի ունենաք» (Շ., 9, 143):

Եւ իրօք, նկատում են, որ ծառերով ծածկուած է միայն Ալաշկերտ գաւառակի Ուլքիլիսա հայաբնակ գիւղը: Ծառեր նկատում են նաեւ ողբերգական ճակատագրի արժանացած այլեւս գոյութիւն չունեցող նոյն գաւառակի Ջետկան հայաբնակ աւերակ գիւղում: Դիաղինից Թաղլիչայ²³ ներքին Սուֆլէ ճանապարհին յանձնախումբը հանդիպում է 30-40 թուրք գերիների մի խմբի, որ համրիկէի եւ իրենց նահանջի պահին կողոպտել էին

21 Դուլթախ (Դուլթաղ, Այնթապ) - գաւառակ Էրզրումի մահաբնակի Բայազետի գաւառի կենտրոնական մասում: 1915-18 թթ. հայերը ենթարկուեցին Եղեռնի արհաւիրքներին, գաւառակի հայ բնակչութեան մի չնչին մասը կարողացաւ փրկուել եւ ապաստան գտնել Արեւելեան Հայաստանում:
22 Ալայը 900 հոգուց կազմուած զօրախումբ էր:

23 Թաղլիչայ (Թաղլիչան) - Էրզրումի մահաբնակի Բայազետի գաւառի Դիաղինի գաւառակի գիւղերից, Դիաղինից 15 կմ հարաւ-արեւմուտք: 1915 թ. ունէր 210 բնակիչ:

Ս. Յովհաննէս վանքը, եկեղեցում եղած բոլոր գրքերն այրել, վանքը ձիերի համար ախոռ դարձրել եւ յաջորդ օրը փախել (8, 365): Մի ուս սպայ Թումանեանին դժգոհում է բերդանաւոր կամաւորներից, որոնք իբր ուսական գէնքով թալանում են տեղացի քրդերին (8, 366): Երբ առաջին անգամ անցնում են Ս. Յովհաննէս վանքի կողքով, տեղի բնակչութիւնը շատ ջերմ է ընդունում, գիշերելու տեղ յատկացնում եւ պատում: Սակայն երբ նոյն զօրամասը նահանջում է, բնականաբար, նոյն բնակիչների կողմից արժանանում է սառը ընդունելութեան, որովհետեւ ամէն անգամ գիւղացիները կարծում էին, թէ ուսների յաղթանակը վերջնական է, եւ շատ չանցած՝ ականատես լինում նրանց նահանջին, ինչն անհամեմատ սոսկալի էր դարձնում նրանց դրութիւնը, մեծացնում դարաւոր թշնամու կատաղութիւնը: Վրացի զարմացած ու զայրացած սպային նրանք պատասխանել էին. «Մենք մտածում էինք, թէ արդէն տիրել էք, բայց որ ետ էք գալիս՝ մենք յիշեցինք անցեալ ժամանակների նահանջները, եւ թէ ինչ է եկել մեր գլուխը դրանց հետեւանքով» (8, 366):

Թումանեանն առաջարկում է այցելել Ուլքիլիսայի ճանապարհից մի փոքր հեռու գտնուող մեծ վանքը, որտեղ մի ժամանակ կաթողիկոսներ են օծուել: Վանքը շրջապատող քարաշէն բոլոր սենեակները աւերուած էին, իսկ գմբէթի տակ բնակութիւն էին հաստատել աղանիները: Խորանները ուսների համար մթերանոց էին ծառայում:

Յրտաշունչ ձմեռ էր, եւ խմբի անդամները չխուսափեցին զանազան հիւանդութիւններից: Եկեղեցում նկատում են, որ Սմբատ Խաչատրեանի ոտքը ցրտահարուել է: Հանդիպում են Լազիքէոյ մերձաբնակ հայկական գիւղի ձիաւոր բնակիչների, ովքեր եկել էին հրաւիրելու պատուաւոր հիւրերին իրենց գիւղում գիշերելու: Սակայն

յանձնախումբը որոշել էր գիշերել Թաղլիչայում: Ձիաւորներից Յակոբ աղայի (Տէր-Ստեփանեան) կարգադրութեամբ Թաղլիչայում խմբին ուղեկցում են գիւղի կենտրոնում գտնուող Բաղոյի տունը, որը տեղի ուս բժշկի ու պարէտի օգնականի Բորիս Անատուլեւիչի կացարանն էր: Թաղլիչայում անցկացրած գիշերը դարձեալ սոսկալի էր: Ինչպէս գրում է Թումանեանը. «ամբողջ գիշեր փախած քրդերի շները սաստիկ ցաւալի ոռնում էին՝ դատարկ դռներին ու կտուրներին» (8, 368):

Թումանեանը լինում է Ջիրա, Մագրա, Մանգասար Լազի, Եօնջալու եւ Երինջա գիւղերում: Նա գրում է. «Ճանապարհին Եփրատի երկու կողմը շարունակ ցոյց էին տալիս հայ գիւղերի աւերակները, որ թողել են գաղթերի ժամանակ 29, 55 եւ 78 թուականներին: Կամ քրդական գիւղեր են նրանց տեղերը, կողքերին՝ ընդարձակ հայկական գերեզմանատներ» (8, 368): Իսկ Եփրատի ձախ ափին գտնուող հայկական Ջիրոյ, Քուփ, Լուսն, Խըրը եւ Մանգասար գիւղերի բնակիչները գաղթել էին հիմնականում քրդերի հալածանքներից ապաստուելու նպատակով. «Քուրդ շամշաղինովները էնքան են նեղացրել, որ գաղթել են Ռուսաստան: Իրենք էլ եկեղեցիները քանդել են ու գիւղերին տիրել» (8, 368):

Յանձնախումբը հիւրընկալուում է Լազիքէոյ հայկական գիւղում Յակոբ աղա Տէր-Ստեփանեանի տանը, ուր բնակուում էր 4 սերնդից եւ 30 անձից կազմուած նահապետական ընտանիքը: Վերջիններիս քաջալերական խօսքերով դիմում եւ ապագայի հետ կապուած յոյս են ներշնչում Թումանեանն ու Խորէն եպիսկոպոսը:

Յաջորդ գիւղը, որով անցնում է յանձնախումբը, Ջիրա կամ Ջիրոյ անունով մասամբ հայաբնակ, գլխաւորապէս՝ քրդաբնակ գիւղն էր: Մինչեւ գիւղ մտնելը տեսնում են ճանապարհի մէջտեղում քուրդ գերիներից մէկի դիակը, որին սպա-

նել էին ուսանողները, քանի որ չէր կարողացել բոլորին համընթաց քայլել յոգնածութեան պատճառով: Այս փաստը Թումանեանը ցաւով է արձանագրում (8, 368): Բանաստեղծի վկայութեամբ՝ Ձիրոյում 12 տուն հայ, 60 տուն քուրդ էին ապրում: Կովկասից եկած անուանի հայերին դիմաւորելու է դուրս գալիս ողջ գիւղը, նաեւ գալիս են հարեւան գիւղերից, այդ թում քուրդ ազգաբնակչութիւնը. «Ձիրոյի տակ եկան եւ Ղազի գիւղի ձիւղերը. իրենք խեղճ, ձիւղճ, խեղճ, ուրախ, ոգեւորուած սկսեցին ձի խաղացնել, ուրախութիւններ անել ձիւնոտ հովտում» (8, 368): Թումանեանը նկարագրում է Ձիրոյ գիւղից թուրքական կանոնաւոր զօրքի փախուստը. «Համրդիէն, որ 4 գունդ է եղել ընդամէնը, մի երկու տեղ կուտելով փախել է, ժամանակ չի ունեցել մեծ վնասներ տայ, կոտորած անի, բայց թալանել է, շորերը հանել է, տները միջից ինչ կարող է եղել վերցնի-վերցրել է, բռնաբարել է: Ռուսները սաստիկ արագ են հետապնդել. Առաջին օրը 85 վերստ անցել են, մի քանի տեղ կուտի բռնուելով ու քշելով» (8, 370):

Յանձնախմբի համար Մազրա եւ Մանգասար գիւղերի քահանաները ժողովրդի հետ միասին երգում են «Թագաւոր փառաց» շարականը (8, 368): Այստեղ Թումանեանը նախ այցելում է 3 անգամ թալանուած մի եկեղեցի: Բանաստեղծը համոզուած է, որ նոյնիսկ ուսանողները հայոց սրբութիւնների հետ հաշուի չէին նստում: «Իջանք, գնացինք եկեղեցի: Եկեղեցին գիւղի վերեւ խղճուկ, մերկ, ոչինչ չունի, ոչ վարագոյր, ոչ սկիհ, ոչ մոմակալ, ոչ գիրք, մերկ միանգամայն, գրում է Թումանեանը: - Պատմեցին, որ երեք անգամ կողոպտել են. ամէն բան տարել, մինչեւ անգամ սեղանի տախտակները... Սաստիկ յուզիչ էր էս գիւղում ու էս եկեղեցում: Եւ չքեցինք կիսաւէր եկեղեցում, կիսամերկ ժողովրդի հետ, թալանուած սեղանի առջեւ ու թալանուած քահանաները սկսեցին երգել - «Ա-

պաւինեցաք ի խաչ քո Քրիստոս»... ամենիս էլ թուաց, թէ առաջին անգամ եղանք թիւրքահայ գիւղում...» (8, 369):

Թումանեանը գրուցում է ամէն ինչ կորցրած թշուառ մի գիւղացու հետ: Նա Սմբատ Խաչատրեանցի ու Խորէն եպիսկոպոսի հետ յուսադրում է խեղճ գիւղացուն, վստահեցնում, որ պատերազմական նեղութիւնները շուտով կ'անցնեն: «Աւետիս տուինք, որ արդէն անցել են հին նեղութիւնները, յուսադրեցինք, որ նորերն էլ պատերազմի ժամանակ է, անցաւոր նեղութիւններ են, շուտով կ'անցնի: Նրանք էլ ոգեւորուած ջերմ զգացմունքով մեր ուսահայերից բերած ողջոյնին ամենայն ջերմութեամբ պատասխանեցին, պատրաստակամութիւն յայտնեցին ամէն նեղութեան դիմանալու... .. եւ չորս հոգով, Խորէն եպիսկոպոսը՝ եկեղեցու ներկայացուցիչ, Խունուցը՝ դպրոցի ներկայացուցիչ, Սմբատը՝ հին գործիչ, դաշնակցութեան ներկայացուցիչ եւ ես՝ գրականութեան նրանց առջեւ կանգնած յոյս էինք տալիս, որ նեղ օրերին լին օրեր կը գան, էրած գրքերի տեղ նորերը կ'ունենան, կիսաւէր թալանուած եկեղեցու տեղ հոյակապ ու նորը կը կանգնի, նրա կողքին էլ դպրոց կ'ունենա» (8, 369):

Թումանեանը կարողանում էր հանդիպած իւրաքանչիւր հայի յուսադրել եւ հաւատացնել, որ նեղ օրերին կը յաջորդեն լաւ օրեր, նրանց դիմանալու ու դիմադրելու կամք էր ներշնչում, մինչդեռ ինքը բանաստեղծն այդ պահին յուսադրողի ու քաջալերողի կարիք ունէր, քանի որ մեծ էր նրա հիասթափութիւնը:

Ձիրոյում լսում են Գիւզալ անունով 18-ամեայ առեւանգուած հայ աղջկայ եւ ուսանողի կողմից նրան ծնողներին վերադարձնելու պատմութիւնը (8, 370)²⁴: Ձի-

24 Խօսքը վերաբերում է 18-ամեայ Գիւզալ Ղազարեանցիին, ում պատերազմից երեք օր առաջ առեւանգել էր Ռասիլ բէկի յիսնամեայ Հասան Էֆէնդու որդի Խաչը եւ տարել լեռները: Երբ 12 օր

րոյին յաջորդում են Ղազի, Եօնջալու եւ Երինջա²⁵ գիւղերը: Երինջալում դարձեալ Թումանեանին եւ նրա ընկերակիցներին դիմաւորում է գիւղացիների խուռն բազմութիւն, որը ճեղքելով խուռնը մտնում է գիւղի կիսով չափ գետնափոր եկեղեցին: Աւերուած եկեղեցու թշուառ ու ողորմելի տեսքն ազդում է ամէնքի վրայ՝ խորհել տալով, թէ ինչպիսի պայմաններում է հայը անասան պահպանել իր նախահայրերի կրօնը:

Ղազի գիւղից դուրս գալիս 90-ամեայ մի կին՝ Սանամ նանը՝ ծոռը գրկին, 30 հոգուց բաղկացած ընտանիքը ետեւում կանգնած, թոնրի կողքին համբուրում է Խորէն եպիսկոպոսի աջը: Իրենց հերթին Խորէն եպիսկոպոսն ու Թումանեանը համբուրում են Սանամ նանի ձեռքը: Խորէն եպիսկոպոսը մի քանի խօսք է ասում եւ խնդրում է Թումանեանին, որ շարունակի: Ինչպէս վկայում է բանաստեղծը, «խօսեցի նահապետական օջախի ու մեծ նանի մասին» (8, 370):

Եօնջալու գիւղում առաջին կանգաւոր դարձեալ եկեղեցին էր: Բանաստեղծը նկատում է, որ սաստիկ շատ են այդ գիւղերում երեխաները, իսկ «կանայք վշտոտ դէմք ունէին, բայց գեղեցիկները շատ են: Նոր է պարզուում ինձ համար, թէ ինչու նուրբ մորթի ունի էստեղից գաղթած Ախալցխայի կողմի կինը» (8, 370): Նա խորհում է. «Ինչպէս ամէն անգամ, էս անգամ էլ քուրդ ու տաճիկի առաջին երազներից մինն էլ եղել են Թիֆլիսի եւ Վրաստանի գեղեցկուհիները» (8, 371): Այստեղ եկեղեցում նոյնպէս հնչում է Թումանեանի խօս-

քը: Եկեղեցուց դուրս գալիս ամէնքի առջեւ իր պարթեւ հասակով, պատկառանք ներշնչող ազդեցիկ տեսքով կանգնում է գիւղի քահանան՝ տէր Յովհաննէսը, ում մինուճար որդուն թուրք զինուորները նոր էին սպանել: Խմբի անդամները քարանուծ են նրա արցունքների առջեւ ու մխիթարանքի խօսքեր չեն գտնում ասելու:

ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅՈՒՄ

Հաւանաբար նոյեմբերի 24-25-ի գիւղերը հասնում են Ղարաքիլիսա՝ կենտրոնական մի մեծ աւան, ուր այդ պահին գտնուում էր ուսական զօրաբաժնի շտաբը: Դիմաւորում է դարձեալ գիւղացիների ստուար բազմութիւնը: Թումանեանը գրում է. «Նոյնպէս ժողովուրդը դուրս էր եկել գիւղից դուրս: Եպիսկոպոսի ձեռքն ու փէշերը համբուրում էին» (8, 371):

Ղարաքիլիսայում գիւղացիները դժգոհում են թէ՛ թուրքերի պատճառած դժբախտութիւններից, թէ՛ ուսանողից, մասնաւորապէս՝ գեներալ Գ. Կ. Աբաղիբի²⁶ հայատեաց քաղաքականութիւնից: Թումանեանը գրում է. «250 խանութ կողոպտել են միանգամայն ու աւերել ուս կազակները: Այժմ 50-ի մէջ զօրք է մնում» (8, 371): Մինչդեռ Խաչատուր անունով մի բնակիչ Թումանեանին հաւաստիացնում էր, որ «թուրքերը տաճկաց նահանջին պաշտպանել են հայերի ինչքն ու կեանքը, նոյնիսկ զէնքով» (8, 371):

Վաղ առաւօտեան խմբի կացարանը շրջապատուած էր շրջակայ գիւղերից եկած բազմաթիւ մարդկանցով, ովքեր հաւաքուել էին իրենց թշուառութիւնները պատմելու եւ օգնութիւն խնդրելու: Անշուշտ, քաջալերական ու յոյսի խօսքեր ասողների

անց ոռուները նրան վերադարձրել են ծնողներին, Իսայը 4 եղբայրների հետ շարունակել է ազատ շրջել Ալադաղի լեռներում եւ սպառնացել է վրէժ լուծել աղջկայ բոլոր մերձատրներից, եթէ իր «աարը» ետ չտան (Ծ., 9, էջ 149):

25 Երինջաւն հայաբնակ գիւղ էր, որը գտնուում էր Երզրումի Ասիական Բալայգետ գաւառում՝ Դիադիմից Ղարաքիլիսա տանող ճանապարհին:

26 Խօսքը վերաբերում է ազգութեամբ օս, մահմեդական ծնունդով ոռու բարձրաստիճան գիւղորակաւ Դմիտրի Կոնստանտինովիչ Աբաղիբիին (Ձամբուլատ Կոնստանտինի Աբաղիբի, Աբաղեւ) (03.12.1857-04.06.1936- Բելգրադ):

մէջ էր Թումանեանը, սակայն ոչ Շիրվան-զադէն, ում կարծիքով դա համագոր էր խեղճ թշուառներին խաբելուն:

Նոյեմբերի 26-ին Ասմարից Արմէն Գարոյից²⁷ ուղևորների նահանջի մասին ահազանգող հեռագիր է ստացւում (8, 372):

Յանձնախումբը նախատեսել էր Ղարաքիլիսայից անցնել Դուխախ, այնտեղից էլ՝ Բասէն, հայ կամաւորների հետ հանդիպելու նպատակով: Սակայն գեներալ Աբաղիեւը կտրուկ մերժում է՝ խմբին արգելելով նաեւ անցնել Դայար (Դահար), որ ընդամէնը երկու օրուայ ճանապարհ էր: Նա չի թաքցնում իր որոշման բուն պատճառը՝ ամէն կերպ խոչընդոտել խմբի ու հայ կամաւորների հանդիպումը: Հանդիպմանը ներկայ էր նաեւ շտաբի գլխաւոր գնդապետ Եւզենի Լեբեդինսկին²⁸, ով կրկնում էր այն ամէնը, ինչ ասում էր Աբաղիեւը: Թումանեանը եւ խմբի անդամները փորձում են Զիրոյից առեւանգուած աղջկայ հարազատների համար գէնք խնդրել, սակայն դարձեալ մերժում են: Թումանեանի տպաւորութեամբ մահմեդական ծագումով գեներալը ամենեւին ցանկութիւն չունէր կռուելու մահմեդական զօրքի դէմ, առաւել եւս՝ յաղթանակի հասնելու:

Ղարաքիլիսայում Աբաղիեւի հովանաւորութիւնն էր վայելում քուրդ շամշադինովների (շամշադուների) ցեղապետ Սէլիմ փաշան, ով ամէն օր գաղտնի տեղեկութիւններ էր հաղորդում թուրքերին:

27 Արմէն Գարո (Գարեգին Յարութիւնի Փաստըմաճեան, 9.02.1872, Կարիճ - 23.03.1923) - ՀՅԴ ակաւաւոր առաջնորդներից, ՀՅԴ ներկայացուցիչ օսմանեան խորհրդարանում, ՀՀ դեսպան Ամերիկայում, «Նեմեսիս» գործողութեան կազմակերպիչներից:

28 Խօսքը վերաբերում է Եւզենի Վասիլեիչ Լեբեդինսկու, 1915 թ. յուլիսի 3-ից գեներալ-մայոր, 1916 թ. հոկտեմբերի 3-ից մշտական էր 6-րդ յատուկ հետախուզիչ բրիգադի հրամանատար, 1917 թ. դեկտեմբերից մինչեւ 1918 թ. մայիսը՝ Կովկասեան ռազմաճակատի հրամանատար:

ուղևորական զօրքի իւրաքանչիւր քայլի մասին: Սէլիմ փաշան զրուցում է Թումանեանի հետ եւ ասիական շողոքորթութեամբ խօսում ազգերի բարեկամութեան, Աւետարանի ու Ղուրանի եղբայրութեան, սիրոյ ու խաղաղութեան մասին (8, 372): Իրականում Շամշադինով քուրդ փաշայի՝ յանձնախմբի հետ հանդիպելու բուն նպատակն այն էր, որ անուանի հայերն իրենց հեղինակութիւնն օգտագործէին եւ համոզէին տեղացի հայերին իրեն «վերադարձնել» տաւարն ու ոչխարները: Սէլիմ փաշան հայկական գիւղերը թալանողներից մէկն էր, եւ հայերն ընդամէնը ետ էին վերադարձրել իրենցից թալանածը:

Յանձնախմբին այցելում եւ հայերից իրենց դժգոհութիւնն են յայտնում նաեւ երկու թուրք գիւղացիներ, որոնցից մէկը մօլլա էր: Նրանք վայելում էին Աբաղիեւի հովանաւորութիւնը: Թումանեանը գրում է. «Աբաղիեւը, մտնելով Դիաղինի եւ Ղարաքիլիսայի շրջանը՝ ղեկավարուել է բացառապէս քրդերի ցուցմունքով, եւ նոյն քրդերը միացել ու ջարդել են ուղևորներին: Աբաղիեւը հայատեսաց է» (8, 350-351):

Թումանեանը զարմանում է, որ մահմեդական ծագումով գեներալը գլխաւոր զօրքի մէջ է այդ պատերազմում, ինչը, նրա կարծիքով, չէր բխում նաեւ Ռուսաստանի շահերից: Այդ է վկայում նրա՝ «ինչո՞ւ է Օսը գլխաւոր զօրքի մէջ» (8, 349) գրառումը: Նոյնկերպ Թումանեանը վրդովուում է նաեւ Երեւանի նահանգապետի Տիգենհաուզենի այլազգի լինելու հանգամանքից. «Ինչո՞ւ է Тизенгаузен-ը նահանգապետ» (8, 349):

Որքան էլ հիասթափութիւնը մեծ էր աբաղիեւներից, Թումանեանը ձգտում էր տեսնել նաեւ ուղևորական զօրքի հայերի նկատմամբ լաւ վերաբերմունքի օրինակներ: Հէնց այդ պատճառով նա գրի է առնում Խաչատուր Երեւանցու պատմածները պատերազմի սկզբում Մոսուլի մօտ ուղևորների հայտնածը:

ների՝ հայերի նկատմամբ ուշադիր վերաբերմունքի մասին: Գուցէ եւ դա պայմանաւորուած էր նրանով, որ ուսուները մեծ չափով զգում էին հայ բնակչութեան օժանդակութեան կարիքը, խնդրում էին առաջնորդել իրենց թուրք ու քուրդ գիւղերը, աշխատում էին իսկապէս գնել մթերքը հայ գիւղացիներից եւ ոչ թէ շորթել. «Ոչխարը ծախում էր 30-40 կոպէկ: Մոսուլն մի խեղճ կին եկաւ, թէ մարդուս թուրքերը զինուոր են տարել, երկխէքս մանր են, սոված են, մի ոչխար տուէք, չտուին: Օֆիցերը հրամայեց՝ հինգը տան. տուին, տարաւ» (8, 377):

ԱԼԱՇԿԵՐՏՈՒՄ

Ղարաքիլիսայից դուրս գալուց առաջ՝ նոյեմբերի 28-ին, Թումանեանն իր համար նոր ձի է գնում, քանի որ նախորդն արդէն ուժասպառ էր: Նոյեմբերի 27-ին Շիրվան-զադէն ու Սմբատ Խաչատրեանցը խմբի անդամներին առաջարկում են ետ դառնալ եւ Սարիղամիշի վրայով գնալ աջակողմեան ռազմաճակատ: Խորէն եպիսկոպոսը, Խունուսնցն ու Թումանեանը համաձայն չէին: Այդ օրը ուղեւորութիւնը յետաձգւում է, եւ նրանք հիւրընկալւում են Գեալմիդասան Հայրապետեանցի տանը: Այստեղ ճաշին հնչում են հայրենասիրական բանաստեղծութիւններ, այդ թւում, անշուշտ, Թումանեանի ոտանաւորներից:

Յաջորդ օրը՝ նոյեմբերի 28-ին, անցնելով Իրեց-Քէօլ գիւղի կողքով, ուղեւորում են Ալաշկերտ. նոյն օրը՝ ժամը 4-ին Ալաշկերտում էին: Յանձնախմբին մօտենում է մի հայ երիտասարդ՝ Վահան անունով, եւ ուղեկցում երկյարկանի կացարան: Այստեղ նրանց դիմաւորում է թուրք տանտէրը՝ Հաջի Իբրահիմ Յէյգուլլա օղլին: Թումանեանը Թումանեան չէր լինի, եթէ գրի չառնէր թուրքերի կամ քրդերի պատերազմի ընթացքում հայերին օգնելու, նրանց կեանքը փրկելու օրինակներ: Նա վկայում է, որ «գութախցիներին ուղևորները՝ հայերի նկատմամբ ուշադիր վերաբերմունքի մասին: Գուցէ եւ դա պայմանաւորուած էր նրանով, որ ուսուները մեծ չափով զգում էին հայ բնակչութեան օժանդակութեան կարիքը, խնդրում էին առաջնորդել իրենց թուրք ու քուրդ գիւղերը, աշխատում էին իսկապէս գնել մթերքը հայ գիւղացիներից եւ ոչ թէ շորթել. «Ոչխարը ծախում էր 30-40 կոպէկ: Մոսուլն մի խեղճ կին եկաւ, թէ մարդուս թուրքերը զինուոր են տարել, երկխէքս մանր են, սոված են, մի ոչխար տուէք, չտուին: Օֆիցերը հրամայեց՝ հինգը տան. տուին, տարաւ» (8, 377):

ների նահանջից յետոյ կոտորածից ազատել է Ղահրաման բէկ հազարապետի կինը» (8, 375): Վկայում է նաեւ, որ Հաջի Իբրահիմ Յէյգուլլա օղլին համիդիէից փրկել էր Վահանի ամբողջ ընտանիքը, իսկ ուսուների գալուց յետոյ Վահանն էլ նրան էր պաշտպանել՝ ուղևորներին ասելով, որ դա ոչ թէ թուրքի, այլ իր տունն է. հակառակ դէպքում տունն ամբողջութեամբ կ'անցնէր ուղևորական զօրքի տրամադրութեան տակ: Երբեմն էլ հայերն են իրենց տները նոյն կերպ պաշտպանել քրդերից:

Հաջի Իբրահիմ Յէյգուլլա օղլին քրդերի յարձակման ժամանակ իր տանը պատսպարել էր ոչ միայն Վահանի, այլեւ 11 այլ հայ ընտանիք եւ նրանց ազատել կոտորածից: Թուրք հաջին գերմանացիներին էր մեղադրում ջուր պղտորելու համար, իսկ էնվէրին՝ «լրբանալու» համար: Թումանեանը երախտիքի ու բարի խօսքերով է յիշում իր թուրք տանտիրոջը՝ գրելով. «Մեր տանտէր Հաջին, մի շատ համակրելի մարդ, համիդիէի իմամ է եղած, պատերազմը սկսուելուն պէս թողնում է գէնքն ու զօրքը, հրաժարւում է, պատերազմին սաստիկ հակառակ է յայտարարում իրեն, գալիս տուն: Հայերին եւ մասնաւորապէս իր հարեւաններին ցոյց է տալիս անձնուէր պաշտպանութիւն» (8, 378):

Սակայն ժամանակի համար բնորոշը թուրք աւագակախմբերի յարձակումներն էին հայաբնակ գիւղերի վրայ. դիտուած ընդհարումներ տեղի էին ունենում ոչ միայն ռազմաճակատի առաջին գծում, այլեւ թիկունքում՝ տարբեր գիւղերի միջեւ: Այդպիսի բախումների կենտրոնում է յայտնւում նաեւ Թումանեանը: Նրա հաւաստմամբ՝ Խաչուլից ներքեւ Խիյաբեկ գիւղի վրայ յարձակումը տեղի էր ունեցել Սէլիմ փաշայի հրամանով (8, 378): Յարձակման է ենթարկւում նաեւ Խաչուլ գիւղը, ուր, սակայն, հայերը դիմադրում են եւ փրկւում ուղևորական զօրքի շնորհիւ (8,

379): Խաչյուլ գիւղի ներկայացուցիչները Թումանեանին ղժգոհել էին, որ զէնք չունեն յարձակումներին դիմադրաւելու համար:

Բանաստեղծը, նկարագրելով հայ կաթողիկէ մի գիւղի խրճիթ-եկեղեցին, որի վրայ դեռ մնում էին այրուած սրբապատկերների մնացորդները, գրում է այն հայ գիւղացիների մասին, ովքեր իրենց օգնութեանն էին դիմել ռուսների միջոցով իրենցից թալանուած ապրանքի մի մասը ետ բերելու համար: «Թալանուողներից ոմանք,- գրում է Թումանեանը,- որոնց ամբողջ տունը թալանած էին, խնդրում էին միջնորդել թալանողներին, որ իրենց մի վերմակ վերադարձնեն կամ մի տոպրակ ալիւր, որ ապրեն» (8, 379):

Յանձնախումբն այցելում է ներսիսեան դպրոցի հոգեւոր սան, ազգերի միջեւ խաղաղութիւն ու համերաշխութիւն քարոզող նահատակուած քահանայի՝ Յովսէփ Տէր-Մինասեանի գերեզմանը: Երբ Ալաշկերտում լուր էր հասել ռուսական զօրքի առաջընթացի մասին, չորս անչափահաս զաւակների հայր քահանան դարձել էր առաջին զոհը. «Թուրքերը բռնում են նրան, ծեծում, անարգում, տանջանքների ենթարկում: Այնուհետեւ կտրում են նրա գլուխը, աչքերը հանելուց յետոյ տնկում են մի ցցի վրայ եւ երեք օր, երեք գիշեր շրջեցնում Ալաշկերտի փողոցներում» (Շ., 9, 162):

ԽԱՍՏՈՒՐՈՒՄ

1914 թ. նոյեմբերի 29-ին Ալաշկերտից Խաստուր (Խազմիր) գիւղի ուղղութեամբ շարժուելիս յանձնախումբը մտլորում է հագիւ խուսափելով ռուս զինուորների կրակոցների զոհը դառնալուց: Ինչպէս վկայում է Շիրվանզադէն, եթէ խրամատից կրակէին, առաջին զոհուողները պիտի լինէին առջեւից գնացող Յովսէփ Խունուսեան ու Յովհաննէս Թումանեանը:

Խաստուր գիւղում 150 տուն հայերի կէսը լուսաւորչական էր, միւս կէսը՝ կաթողիկէ: Խումբն այցելում է թէ՛ լուսաւորչական, թէ՛ կաթողիկէ եկեղեցիները: Կաթողիկէ եկեղեցին շատ աւելի լաւ վիճակում էր, քան լուսաւորչականը. քանի որ պատերազմից առաջ հայ կաթողիկէները գտնուել են եւրոպական հիւպատոսների պաշտպանութեան տակ:

Խաստուրում նոյնպէս տեղացիների բազմութիւնը, միմեանց հրելով, միմեանց ուսի բարձրանալով, լցում է Թումանեանի եւ նրա խմբակիցների կացարանը:

Թումանեանն այստեղ ուրախութեան ու հպարտութեան պահեր է ապրում՝ պարզելով, որ Խաստուր գիւղում գրեթէ բոլորը «առանց բացառութեան» գրագէտ են. Պոլսի միացեալ ընկերութիւնը միշտ պահել ու հովանաւորել է տեղի դպրոցը: Գիւղում բոլորը նոյնիսկ ֆրանսերէն գիտէին:

ԶԵՏԿԱՆՈՒՄ

Խաստուրից յանձնախումբն ուղեւորում է Զետկան (Զէյտիքան, Զէյդեքան)՝ նոյեմբերի 29-ի երեկոյեան հասնելով այնտեղ:

Թումանեանը նկատում է, որ Արեւմտահայաստանի այդ հատուածում հայկական գիւղերը տափարակների վրայ էին կամ ձորերում, ի տարբերութիւն բարձր լեռների վրայ, անմատչելի ժայռերի մէջ գտնուող քրդական գիւղերի: Բացառութիւն չէր նաեւ Զետկանը, որը, բլուրներով շրջապատուած լինելով, պարզապէս փոսի մէջ էր՝ հեշտ թիրախ թշնամու համար: Արտաքուստ խղճուկ այդ գիւղը Ալաշկերտի շրջանի՝ վարելահողերով հարուստ գիւղերից էր (300 դեսեստին): Գիւղում զբաղւում էին ե՛ւ երկրագործութեամբ, ե՛ւ խաչնարածութեամբ:

Խումբը կանգ է առնում գիւղի ծայրում գտնուող ուսումնարանի կիսաւէր շէնքի առջեւ: Գիշերելու տեղ յատկացնե-

լու խնդրանքով կամենում էին դիմել գիւղի քահանային, սակայն ճանապարհին հանդիպած՝ աղբիւրից ջուր տանող կանանցից տեղեկանում են, որ գիւղը քահանայ չունի: Նրանց օգնում է մուսլաղէմ մի վարժապետ, ով մինչեւ գիւղամէջ խմբին ուղեկցում է քար լուծեամբ, առանց մի բառ արտաբերելու:

Խմբին առաջարկուած կացարանը մի մութ ու հողէ յատակով, ծխից սեւացած առաստաղով սենեակ էր, որն աջ ու ձախ կողմերից կաւէ միջնորմերով բաժանուած էր գոմերից: Տանտէրը՝ Պողոս Մուրադեանը, գրագէտ ու ընթերասէր անձանցից էր, ով միշտ կարգում էր Պոլսի լրագրերը եւ խօսում էր մաքուր գրական արեւմտահայերէնով: Ծերունին հաւատում էր, որ Թուրքիան կը կործանուի «Իթիհաստ չկրցաւ փրկել Թուրքիա: Պիտի կործանուի մեզի ըրած չարիքներուն մեղքով... ճշմարիտ կսեն» (Շ., 9, 169), իսկ ներկայ պատերազմը համարում էր ամենաաղետաւորը: Ծերունու խօսքերով «առաջ էլ կողոպտում էին, կոտորում, բռնաբարում, բայց առաջուայ թուրքի ախորժակը չափ ունէր եւ քուրդի դաժանութիւնը՝ սահման: Թուրքը այլասերուել է» (Շ., 9, 169):

Թումանեանը նկատում է, որ Զետկանի գիւղացիները արեւելահայ գիւղերի բնակիչներից աւելի կրթուած ու «աւելի ինտիլիգենտ» են (8, 380): Ծայրայեղ աղքատութեան մատնուած այս գիւղում, սակայն, ամէնքն ուրախանում են՝ տեսնելով անուանի բանաստեղծին, որի ստեղծագործութիւնները հրաշալի գիտէին, եւ ոչ միայն այդ գիւղում: Թումանեանը գրում է. «Շատ տեղեր դէպք եղաւ գիւղերում, որ ինձ մօտ էին գալիս պատանիներ, երիտասարդներ, խօսում էին իմ բանաստեղծութիւններից» (8, 380):

Հանդիպելով իրենց սիրելի գրողին՝ յատկապէս կանայք ու աղջիկները ուրախութիւնից լաց են եղել, խնդրել մի յիշա-

տակ թողնել իրենց: Նրանցից ոմանք հպարտութեամբ ցոյց են տուել իրենց տներում պահուող՝ Թումանեանի երկերի հրատարակութիւնները: Թէ ինչ յիշատակ է թողել, չենք կարող ասել, բայց որ կատարել է նրանց խնդրանքը, չենք կասածու: Եւ երբեք ոչ ոք չի իմանայ, քանի որ այս գիւղի անունը ընդամէնը մէկ-երկու շաբաթ անց սարսուռով են յիշելու յանձնախմբի բոլոր անդամները:

Նոյեմբերի 30-ին Թումանեանը գրի է առնում «Հազարան բլբուլի» երկու տարբերակ՝ լսելով երկու հեքիաթասաց գիւղացիների: Մշտապէս լինելով պատմական դէպքերի յորձանուտում՝ նա երբեք չէր մոռանում արուեստագէտի, բանագէտի ու բանահաւաքի, աղագրագէտի, մշակութային գործչի իր հետաքրքրութիւնները: Եւ ահա նրա օրագրում, վիճակագրական տուեալների, հայերի ու քրդերի ապրելակերպի, կենցաղի, զէնքերի, ողջ ու նահատակուած մարդկանց ճակատագրերի, պատմական անցեալի եւ այլ խնդիրների մասին գրառումների կողքին յայտնուում է «Հազարան բլբուլ» հեքիաթի երկու տարբերակ. մէկը պատմել էր 42-ամեայ Սերոբ Մարգարեանը, միւսը՝ 36 տարեկան Աւետիս Կարապետեանը: Վերջինիս պատմածն ունէր «Սինամ թագաւորի հեքիաթը» վերնագիրը²⁹: Երկուսն էլ հեքիաթը լսել էին Կարսում: Հայոց վշտի ծովում անգամ գրողը կարողանում էր համադրել հայի ապագայի ու ներկայի համար պայքարող մարտիկին, ազգի նահապետին, արուեստագէտին, հետազօտողին ու գիտնականին, պատմաբանին ու բանահաւաքին:

Դեկտեմբերի 1-ին խումբը փորձում է գնալ Դելի-Քէօյի (Բաշքէօ) ուղղութեամբ: Սակայն պարզւում է, որ այն պաշարուած է քրդերի կողմից, ինչպէս Դահարն ու Խաչլուն: Որոշում է Մոսուսի բարձունք-

29 Այդ տարբերակները տե՛ս ԵԼԺ, հտ. 4, էջ 464-466 եւ 466-470:

ներով վերադառնալ սահմանազուլուի եւ Սարիղամիշի վրայով գնալ ուղղաճակատ:

Ձեռականից յանձնախմբի հեռանալուց մի շաբաթ անց ուսական զօրքը Ալաշ-կերտի հովտից հեռանալու հրաման է ստանում: Ահաբեկուած հայ բնակչութիւնը ուսական զօրքի հետ բռնում է գաղթի ճանապարհը: Ալաշկերտի խորքում գտնուող Ձեռական ու Մուլլա-Սուլէյման գիւղերը չեն կարողանում միանալ գաղթականների հոսանքին եւ ամբողջովին կործանւում են: Փաստօրէն Թումանեանի հեռանալուց ընդամէնը օրեր անց այդ գիւղի բոլոր 90 ընտանիքները՝ իւրաքանչիւրը մօտ երեսուն անձից բաղկացած, այլեւս գոյութիւն չունէին. «Մնում են նրա աւերակները եւ, ո՞վ գիտէ, գուցէ ե՛ւ նրանց վրայ ոռնող շները» (Շ., 9, 166): Երբ ուսական զօրքը նորից է վերադառնում Մուլլա-Սուլէյման գիւղ, զարհուրելի տեսարանի առջեւ է կանգնում: Շիրվանզադէն գրում է. «Առաջին օրը մեր կազակները արիւնշաղախ փողոցներում ժողովեցին տասնեւեօթ ծերերի, տասնուհինը կանանց եւ քսանուհինգ երեխաների դիակներ, պատմում է ականատեսը: Եւ ինչ դրութեան մէջ, աստուած իմ: Անարգուած, յօշոտուած, պղծուած: Այստեղ գլուխներ, այնտեղ ոտներ ու ձեռներ: Այստեղ կանանց ծծեր, այնտեղ նրանց մարմինները: Մերերի աչքերը դուրս բերուած: Մանուկների բազուկները կտրտած, երեւի մայրերի փէշերից պոկելու համար:

Եւ պէտք է տեսնենք, ինչպէս էին լալիս մեր կազակները, արցունքները սրբելով իրենց թեւերով: Մարդիկ, որոնց զգացումները բովոնել էին արեան ու կրակի մէջ, փափկել էին, ինչպէս երեխաներ...» (Շ., 9, 174): Նոյնը կատարուել էր նաեւ Ձեռականում: Եւ միայն հրաշքով Թումանեանը չի դառնում Եղեռնի այդ զոհերից մէկը:

Դեկտեմբերի 1-ին Կովկասեան ճակատում սկսւում է ուսական զօրքի ընդհա-

նուր նահանջը: Ճանապարհին Թումանեանը կրկին հանդիպում է Արմէն Գարոյին: Նա, տեսնելով բանաստեղծի ծանր մաուզերը, համոզում եւ ձեռքից վերցնում է այն:

Դեկտեմբերի 2-ին բանաստեղծը դարձեալ Թաղլիչայում էր: Ցաւում էր՝ տեսնելով, որ պատերազմական իրավիճակներում ոչ մի կողմից ոչ մի սրբութիւն չէր յարգւում: Թումանեանը արձանագրում է. «Թուրքերն ու քրդերն էլ, ի հարկէ, աւելի վատ էին վարուել հայոց եկեղեցիներում - ոչ միայն ձիանքը ներս քաշել, այլեւ կողոպտել, էրել ու Քրիստոսի աչքերին հրացանով նշան բռնել» (8, 384):

ԴԻԱԴԻՆ-ՄՈՍՈՒՆ-ՕՐԳՈՎ-ԻԳԴԻՐ

50 անձից կազմուած խմբով Թումանեանը յաղթահարում է Դիադինի բարձունքը, այնուհետեւ իջնում ձորեր ու նորից բարձրանում ձիով մինչեւ Մոսուկի զառիվայրը, որտեղ բոլորը ստիպուած էին իջնել ձիերից եւ բուքն ու ձիւնը յաղթահարել ոտքով. սառույցների վրայ ձիերը չէին դիմանում, անվերջ ընկնելով ու բարձրանալով սառած գետնին սայթաքում էին եւ չէին կարող այլեւս բռն պահել իրենց վրայ: Այդ գիշեր սատկում է տէր Նիկոլի ձին: Շիրվանզադէի բնութագրմամբ՝ Դիադինից Մոսուկն «դօնքիչոտական ճամփորդութիւնը... որքան երեխայական ու ծաղրելի էր, նոյնքան եւ վտանգաւոր: Երկիրը սառած էր ու քարքարօտ» (Շ., 9, 182):

Դեկտեմբերի 3-ի երեկոյեան հասնում են Մոսուկ հայաբնակ գիւղը, որը կիսում էր միւս հայ գիւղերի ճակատագիրը՝ կողոպուտ, սպանութիւններ, բռնաբարութիւններ: Այդ օրը գիշերում են Մոսուկում եւ, ինչպէս ամենուր, լսում ողբեր ու գանգատներ: Թումանեանը գժուարութեամբ, սակայն կարողանում էր յոյսի ու քաջալերանքի, լաւատեսութեան խօսք ասել: Մոսուկից ուղեւորւում են Օրգով, այնուհետեւ՝ Իգդիր: Այստեղ Թումանեանը բա-

նակցում է գեներալի հետ եւ ձեռք բերում խոստում կամաւորներին ձմեռելու տեղ յատկացնելու մասին: Խումբը՝ երկշաբաթեայ դաժան ուղեւորութիւնից յետոյ, հիասթափուած, հոգեկան ու բարոյական ցնցումներից տանջահար դեկտեմբերի 5-ին վերադառնում է Էջմիածին, այնտեղից՝ Երեւան, ապա ուղեւորւում Ալեքսանդրապոլ ու Սարիղամիշ:

Թումանեանը ընկերոջը՝ Փիլ Վարդազարեանին, գրում է ապագայի հետ կապուած իր անհանգստութիւնների մասին. «Անկարելի է նամակով պատմել տեսածներս ու լսածներս, դրա համար էլ աւելորդ համարեցի գրել մինչեւ այժմ եւ այժմ էլ գրեթէ նոյնն եմ անում - թէեւ նամակ եմ գրում: Ընդհանրապէս շատ տխուր են տպաւորութիւններս եւ շատ հեշտ կարող ենք աղետալի դէպքերի հանդիպել, էնքան խախտ է մեր վիճակը» (10, 220): Դեկտեմբերի 10-ին նա արդէն գիտէր, որ թշնամին ետ է գրաւել մի շարք քաղաքներ ու գիւղեր, որոնք ընդամէնը նոյեմբերի 19-ին ազատագրել էին Անդրանիկի զօրքերը, ինչի լուրը նոյն օրը ստանալուց խանդավառուել ու հպարտացել էր ինքը:

Դեկտեմբերի 11-ին հասնում են Սարիղամիշ: Թումանեանն այցելում է գաղթականներին: Դեկտեմբերի 12-ի առաւօտեան ժամը 5-ին, երբ բանաստեղծը դեռ անկողնում էր, լսում է թուրքերի «գալու գոյժը: Խոնոնցն ու Ս. Խաչատրեանցն էին բօթը բերողները: Առաջին պահին չի հաւատում. «Ձարմացանք, ծիծաղեցինք, խօսեցինք ու վեր կացանք լուացուեցինք, նստեցինք թէյի», - գրում է նա (8, 390): Բայց քիչ անց հասկանում է դրութեան լրջութիւնը: Թումանեանն այդ պահին փսոսում է, որ իր մաուզերը զիջել է Գարոյին: Բանաստեղծը խուճապի չի մատնւում եւ խնդրում է տանտիրոջից՝ Մատթէոս Տէր-Ստեփանեանից, իր համար զէնք գտնել: Վստահ էր, որ մասնակցելու է

մարտական գործողութիւններին: Տանտէրը բերում է մի ժանգոտած բերդան: Թումանեանը, իբրեւ զէնքին հրաշալի տիրապետող, գննում է այն, նշան բռնում եւ տխուր տոնով եզրակացնում. «Անպէտք բան է: Ախ իմ մաուզեր»: Դեկտեմբերի 13-ին յանձնախումբը՝ Թումանեանն ու Շիրվանզադէն, Յ. Խոնոնցը եւ Խորէն Եպիսկոպոսը, Սարիղամիշից Ալեքսանդրապոլ, այնտեղից՝ Թիֆլիս են վերադառնում՝ առանց հասնելու իրենց նպատակին՝ անցնելու ռազմաճակատի գիծը եւ հանդիպելու հայ կամաւորական ջոկատներին: Նրանց խանգարել էին ոչ միայն քրդերը, այլեւ ուս գեներալները: Դեկտեմբերի 14-15-ին բանաստեղծն արդէն Թիֆլիսում էր:

Արեւմտեան Հայաստանից Թումանեանը վերադառնում է «ծանր տրամադրութեամբ, զարհուրելի տպաւորութիւններով, ժողովրդի ողբերգական վիճակի մասին պատմում էր սարսափելի մանրամասնութիւններով»³⁰:

Թումանեանի առաջին ուղեւորութիւնը Արեւմտահայաստան՝ ռազմաճակատ, հայ կամաւորի եւ առհասարակ հայոց արժանապատուութեան համար հերոսական պայքարի մի դրուագ է: Թումանեանի վատառողջ թոքերը մի կերպ դիմացան 1914 թ. դեկտեմբերեան դաժան սառնամանիքին, սակայն, ինչ խօսք, անհետեւանք չանցան եւ նպաստեցին նրա անժամանակ ծերացմանը: Պատճառը միանգամայն յստակ է, խօսքը ամէնքի հետ ապրող, ամէնքի չափ տառապող բանաստեղծի մասին է: Ինչպէս գրում է Ջապէլ Եսայեանը. «Անիկա յուզմունքով եւ բարձր զգացումով կը խոնարհէր մարդկային տառապանքի առաջ, կարծես թէ անձնական պատասխանատուութիւն զգալով այդ տառապան-

30 Նուարդ Թումանեան, Յուշեր եւ գրոյցներ, Երեւան, 2009, էջ 117:

քի հանդէպ»³¹: Արեւմտեան Հայաստանից ստացած Թումանեանի տպաւորութիւնները մշտապէս վառ մնացին նրա հոգում: Այդ մասին նա յաճախ էր բարձրաձայնում, մասնաւորապէս՝ Ջապէլ Եսայեանի հետ զրոյցներում: Չօպանեանի բնորոշմամբ՝ «մեծագոյն գրագիտուհին»՝ Ջապէլ Եսայեանը, հաւաստում է. «Արեւմտահայ ժողովրդի մասին իր ունեցած կարծիքը ընդհանրապէս շատ բարձր էր: Իմ Կովկաս գալէս առաջ, անիկա գացեր էր ռազմաճակատ եւ այցելել էր Ալաշկերտի եւ Հին Բայազետի թափուր գիւղերը: Անիկա գիրք եւ գրականութիւն էր գտեր գիւղական խրճիթներու մէջ եւ յաճախ հիացումով եւ զարմանքով կը խօսէր այդ մասին: Անիկա տեսեր էր նաեւ Վանի գաղթականներու թշուառ վիճակը էջմիածնի պարիսպներու առաջ»³²:

ՕՐԱԳՐԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ

Այդ զարհուրանքների մէջ Թումանեանը կարողանում էր իր տպաւորութիւնները թղթին յանձնել եւ նրա պատերազմական օրագրային գրառումները, որոնք կցկտուր են, գրուած են հապճեպ, ոտքի վրայ, չափազանց արժէքաւոր են իբրեւ Առաջին աշխարհամարտի տարիներին արեւմտահայկեան կեանքի վաւերագրեր:

Բանաստեղծի դատեր՝ Նուարդի հաւաստիացմամբ՝ հայրը, որ այդ ուղեւորութեան ընթացքում «նշել էր տխուր փաստեր, դէպքեր, տպաւորութիւններ, մտածում էր այդ օրագրի հիման վրայ գրել ու հրատարակել իր ուղեգրութիւնները»³³:

Բանաստեղծը նշում էր միայն փաստերը՝ մեկնութիւնները թողնելով ապագային, որոնց հիման վրայ կարող էին ստեղծուել թէ՛ հրապարակագրական յօդուածներ եւ

թէ՛ գեղարուեստական երկեր: Թումանեանը չհասցրեց ուղեգրութիւն կամ որեւէ այլ ժանրի երկ ստեղծել օրագրի նշումների հիման վրայ, նոյնիսկ գրառած «Հազարան բլբուլի» տարբերակներն օգտագործել, սակայն այն, ինչ տեսել էր ու լսել, իր ազդեցութիւնը թողեց նրա յետագայ ոչ միայն հրապարակագրական ու գեղարուեստական ժառանգութեան, այլեւ ողջ կեանքի վրայ. տխուր ու անջնջելի հետք:

Թումանեանի նոթատետրում հանդիպում ենք Արեւմտեան Հայաստանի բնակչութեան կեանքի, կենցաղի ու ապրելակերպի բազմաբնոյթ նկարագրութիւններ:

Բանաստեղծի գրառումներից առաջինը վերաբերում էր հայկական ու թուրքական կողմի քրդերի կենցաղի ու սոցիալական վիճակի տարբերութեանը. «Մերը եւ նրանց կողմի քրդերը՝ մերը մաքուր ու հարուստ, նրանցը՝ աղքատ ու նիհար» (8, 349): Հնարաւոր է այս դիտարկումը մղել է բանաստեղծին խորհել քրդերի կողմից հայերին դաժանաբար սպանելու եւ կողոպտելու պատճառների մասին: Հայերի հետ ապրող քրդերը ոչ միայն կարողանում էին աւելի հարուստ լինել, քանի որ մշտապէս կեղեքում էին նրանց, այլեւ նրանցից սովորում էին աւելի մաքուր կենցաղով ապրել: Բազմաթիւ են միմեանց կողքի ապրող հայի ու քրդի զբաղմունքի, կենցաղի ու ապրելակերպի տարբերութիւնն ընդգծող գրառումները, ինչպէս, օրինակ. «Շրջակայ քրդերի գիւղերի շուրջը վարած հողեր չկան: Վարուցանքը թողած է հայ գիւղացիներին» (8, 355): Իսկ Բայազետում արձանագրում է. «Քաղաքի գրեթէ ամբողջ վաճառականութիւնը հայերի ձեռքին է, արհեստները՝ առանց բացառութեան: Շատ առողջ է ժողովուրդը: Զուրը գովուած է, օդը՝ լեռնային» (8, 362):

Աւելին, Թումանեանը չէր կարող չնկատել եւ չարձանագրել քուրդ բեկերի ու ոռու որոշ գեներալների համագործակ-

31 Թումանեանը ժամանակակիցների յուշերում, Երեւան, 2009, էջ 156:
 32 Նոյն տեղում, էջ 157:
 33 Նուարդ Թումանեան, Աշ. աշխ., էջ 119:

ցութիւնը հայերի դէմ: Նա ականատես էր եղել եւ պայքարել դրա դէմ նաեւ 1905-1906 թթ. Հայ-թաթարական կռիւների ժամանակ³⁴:

Հանդիպում են նաեւ Արեւմտեան Հայաստանի աշխարհագրական տեղանքի, բնակիչների արտաքինի եւ բնութեան նկարագրութիւններ: Առաջին անգամ լինելով Արեւմտեան Հայաստանում գրողն աշխատում էր նկարագրել նաեւ հայ գիւղերի աշխարհագրական դիրքը, աւելի լաւ ճանաչելու համար հայրենիքը: Չինգիլի (Կարկառ) քրդական Ղարբուլաղ գիւղի մօտերքում, յիշելով հայ թագաւորներին ու հայրենիքի անցեալը, գրում է. «Հեռուում Բայազետի տեսարանը - յիշողութիւններ: Ներքեւ Մաքու, վերեւ՝ Ղարաքիլիսա եւ այլն: Արտաշէսը» (8, 354): Նկատում է նաեւ, որ Բայազետը «իջնելու է ներքեւ - հովիտը» (8, 354): Դիակների աշխարհում բանաստեղծը կարողանում է վեր կանգնել նոյնիսկ իր տառապանքից եւ աչքաթող չի անում Արեւմտեան Հայաստանի բնութեան գեղեցկութիւնները: Հայկական լեռնաշղթան նկարագրելիս յիշատակում է ե՛ւ հայկական, ե՛ւ թուրքական անուանումները. «Բայազետի հովտի մի կողմից սկսւում է Ալաղաղի շղթան, միւս կողմից Բարթոլի շղթան, թուրքերէն Սինաքայ սարերը, մէջը Ալաշկերտի հրաշալի հովիտն է - Դիակների մօտից Եփրատը՝ Մուրադչայը՝ Արածանին: Հովտի վերջում Ս. Յովհաննէսից յետոյ երեւում է Քեսոսադաղը հովտի մէջ - շատ գեղեցիկ» (8, 367): Իսկ Եօնջալու գիւղից նրա աչքի առջեւ բացւում է Հայկական լեռնաշխարհի նոյն շղթայի մի այլ տեսարան. «Գեղարուեստորէն, մեղմ ալիքներով ձգւում են զուգահեռաբար Ալաղաղի շղթան - Մաղկանց լեռ-

ներն ու Բարթոլ շղթան - Սինաքայ սարերը, որոնց մէջ Քեսոսադաղը վեհ ու գեղեցիկ բարձրանում է հեռուից» (8, 371): Մէկ այլ գրառման մէջ Հայոց գետերի մասին հայրենագիտական մանկական խաղերի հեղինակ Թումանեանը գրում է. «Էստեղից (նկատի ունի Դիակները - Ս. Յ.) սկսւում է Եփրատը. Դիակներից անցնում է Մուրադչայը (Արածանին)» (8, 364): Արծափում չորս կողմը նկատելով հին պարսպի մնացորդները, յիշում է Հասան խանի կողմից գիւղի պաշարումը եւ բնակիչների չորսամսեայ հերոսական դիմադրութիւնը: Թումանեանը, անձամբ առերեսուելով արեւմտահայկեան անլուր տառապանքին ու անպատմելի սարսափներին, մէկ անգամ եւս համոզւում է նրա կենսունակութեան մասին իր պատկերացումների իրաւացիութեան մէջ եւ կարծում է, որ ժողովրդին արիաբար մարտնչելու ու զարհուրելի իրականութեանը դիմադրաւելու ուժ տալիս է հայրենի բնութիւնը. Եօնջալու գիւղում նա գրում է. «Ժողովուրդը, մանաւանդ կանայք, քնքոյշ դէմք ունեն ու առողջ, երեխաներն էլ, չնայելով էսքան տառապանքին, կեղտին ու աղքատութեանը: Երկու կողմից դալար ստինքները բաց արած սնուցանում են նրան լեռնաշղթաները, իսկ մէջտեղը ոլորապտոյտ, հանդարտ հոսում է Արածանին-Եփրատը» (8, 371): Ուշադիր հետեւելով հայրենի երկրի աշխարհագրական դիրքին, անմատչելի լեռներին ու ձորերին, յաղթահարելով անասելի ֆիզիկական դժուարութիւններ ուղեւորութեան ողջ ընթացքում՝ Թումանեանը ուզում է հաւատալ, որ «էս երկիրը ոչ մինը չի տիրելու ֆիզիկապէս, մնում է կուլտուրական ուժին» (8, 385):

Բանաստեղծը չէր կարող անտարբեր անցնել Արեւմտեան Հայաստանի բնութեան կողքով, մանաւանդ որ իր մեծ հայրենիքի այդ հատուածի գեղեցկութեանը ակնատես էր առաջին անգամ: Նա գրի է առնում նաեւ Բայազետի բերդի կառուց-

34 Ս. Յովհաննիսեան, Թումանեանի կեանքի ու ստեղծագործութեան պատմութիւնը (1900-1912). Գիտական կենսագրութիւն, Երեւան, 2012, էջ 374-375:

ման պատմութիւնը, Բաֆֆու Հերոսի՝ Խենթի մասին պատմող աւանդութիւններ:

Այդ գրառումներում զգացում է նաեւ Հեղինակի տազնապն ու ցաւը: Սիրտը ցաւում է 8 անգամ աւերուած ուրարտական բերդի համար³⁵, մանաւանդ՝ Բայազետի սքանչելի շինութեան՝ «Արեւելեան գեղեցկուհի» բերդի Աւետիս անունով ճարտարապետի համար, որի թեւը կտրել էին, հէնց որ սքանչելի շինութիւնը վեր էր խոյացել, այն գնդակների ու ռումբերի հետքերի համար, որոնք տեսնում էր շինութեան վրայ եւ բերդի հետ կապուած աղետալի պատմութիւնների համար (8, 361): Ի դէպ, ըստ էփրիկեանի՝ բերդը կառուցուել է ԺԼ. դ. վերջին Մահմուդ փաշայի հրամանով եւ «մի հայ ճարտարապետի ձեռքով»³⁶: Թումանեանը չի նշում անունը եւ ճակատագիրը՝ հայ արուեստագետի: Մի ժամանակ այդ պալատը համարուել է Թուրքական կայսրութեան ամենանշանաւոր պալատներից մէկը: Նրա դահլիճները մարմարից էին՝ զարդարուած բազմաթիւ սիւներով եւ արեւելեան ոճի կենդանագրերով: Թումանեանը տեսնում է, որ բացի մզկիթի մինարէից, մնացած շինութիւնները աւերակ էին:

Օրագրում Թումանեանը մէկ առ մէկ յիշատակում է հայոց գեղեցկութիւնները խեղող, հայ մշակոյթի վրայ ձեռք բարձրացնող բարբարոսների եւ այլ պատմական անձերի անուններ, ովքեր անցել են այդ վայրերով, եւ միայն մի դարի ընթացքում

8 անգամ աւերել են ուրարտական շրջանից մնացած բերդը՝ «Չաչան՝ օղլի, Թամուր փաշայ, Վանայ Թամուր աղէն - Մակուայ Նադիր շահը, Պասկելիչը, Բերուտովը, 1877-ին՝ Տէր-Ղուկասով, 1914-ին էլ եւ այլն» (8, 363):

Կային նաեւ գրառումներ, որոնցից յետագայում կարող էին ծնուել նոր գեղարուեստական գործեր, կարող էին դառնալ վաւերագրական նիւթ, փաստարկ գրողի հրապարակախօսական յօդուածներում կամ պատմագիտական աշխատութիւններում:

1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Թումանեանն առաջին անգամ տեսաւ Արեւմտեան Հայաստանը, նրա բնաշխարհը, աւերուած երկիրը, տեսաւ «հալածական» ժողովուրդ: Նա տեսաւ մարդկային երեւակայութեան բոլոր սահմաններն անցնող վայրագութիւնների հետքերը, վերստին ու աւելի մեծ ուժով հիասթափուեց մարդ արարածից, քանի որ անձամբ դէմ առ դէմ հանդիպեց մարդ գազանին: Թումանեանը սեփական արեան բաղադրութեամբ, հոգու եւ սրտի իւրաքանչիւր թրթիռով զգաց արեւմտահայի ու ողջ ազգի տառապանքն ու ցաւը, փորձեց իր ուժերի ներածին չափով դարմանել այդ ցաւը եւ սպառուեց լոյս տալով.

Քանի՜ ձեռքից եմ վառուել,
Վառուել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լոյս տրել,
Լոյս տալով եմ ըսպառուել:

35 Բայազետի հիմնադրոց բերդի մասին գերմանացի ճանապարհորդ Վագները գրել է. «Յանդուգն եւ հրաշակերտ մի շինուածք է՝ այնպիսի տեղերի վրայ հաստատուած, որ բազէներն ու անգուները հազի թէ կը համարձակուեն բուն դնելու» (Հայագիտական հետազոտութիւնների մատենաշար, Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1, Երեւան, 1986, էջ 584):

36 Նոյն տեղում, էջ 584):

ԱՔԵՄԵՆԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՉԱԿԱՆ ՄԻ ՊԱՇՏՕՆԻ ԾՈՒՐՋ

Յովհաննես Խորիկեան

Անտիկ հեղինակներն Աքեմենեան տէրութեան գոյութեան ողջ ընթացքում Ք. ա. 2.-7. դարերում, յիշատակում են վարչաաշխարհագրական բառակապակցութիւններ, որոնց տեղադրութիւնը եւ դրանք կառավարող պետական բարձրաստիճան պաշտօնեաների՝ պարսից արքունիքում զբաղեցրած դիրքն առ այսօր յստակ պարզաբանում չի ստացել: Ստորեւ կը քննենք հին հեղինակների՝ խնդրոյ առարկայի մասին բոլոր տեղեկութիւնները՝ անհրաժեշտութեան դէպքում համադրելով Աքեմենեան սեպագիր արձանագրութիւններում յիշատակուող աշխարհագրական բառակապակցութիւնների հետ¹: Այսպէս, Հերոդոտոսը յայտնում է, որ Դարեհ Ա-ն Օտանէսին նշանակել էր առափնեայ (շրջանի - Յ. Խ.) զօրքերի ստրատեգոս՝ հրամանատար², այսինքն՝ Օտանէսի ձեռքում կենտրոնացուած էր միայն ռազմական իշխանութիւնը: Հերոդոտոսը միաժամանակ գրում է, որ Դարեհ Ա-ի եղբայր Հիւստասպէսի որդի Արտափրենէսը Ասիայի առափնեայ բոլոր ժողովուրդների կառավարիչն էր, ունէր մեծ զօրք եւ շատ նաւեր³: Քսերքսէսի ժամանակ Ասիայի առափնեայ զօրքերի ստրատեգոսը Հիւզառնէսն էր⁴, ինչը նշանակում է, որ Հիւզառնէսը վարչական կառավարման լիազօրու-

թիւններ չի ունեցել: Ստացում է, որ ժամանակ առ ժամանակ ռազմական եւ վարչական իշխանութիւնները կա՛մ բաժանուած են եղել մի քանի հոգու միջեւ, կա՛մ էլ միաւորուած՝ մէկ հոգու ձեռքում:

Դիոդորոս Սիկիլիացին Կիւրոս Մեծի ժամանակ Հարպագոսին յիշատակում է որպէս ծովի ստրատեգոս⁵, այսինքն՝ խօսքը վերաբերում է առափնեայ ժողովուրդների հրամանատարին կամ էլ առափնեայ շրջաններում գտնուող նաւատորմի հրամանատարին: Դիոդորոս Սիկիլիացին Կիւրոս Կրտսերին անուանում է ծովի մօտ գտնուող սատրապութիւնների կառավարիչ (հեգեմոն)⁶: Պլուտարքոսը Կիւրոս Կրտսերին յիշատակում է Լիւզիայի սատրապ եւ առափնեայ նահանգների ստրատեգոս⁷: Մէկ այլ տեղեկութիւնում Դիոդորոս Սիկիլիացին եւ Քսենոփոնն այդ պաշտօնում (ծովափի կառավարիչ) յիշատակում են ստրատեգոս Ստրուտոսին⁸: Դիոդորոս Սիկիլիացին նշում է, որ այդ պաշտօնին յաւակնում էր նաեւ ստրատեգոս Օրոնտէսը⁹, իսկ Մենտորը նշանակում է Ասիայի մերձափնեայ շրջանների գլխաւոր

1 Այդ բառակապակցութիւններն արդէն քննարկել ենք մեր մէկ այլ աշխատութեան մէջ: Տե՛ս Յ. Խորիկեան, Աքեմենեան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, Երեւան, 2010, էջ 35-39:
2 Herodotus, with an English translation by A. D. Godley, Vol. III, Books V-VII, Cambridge-Massachusetts-London, 1938, Loeb Classical Library, V, 25, p. 26.
3 Նոյն տեղում, V, 30, էջ 30:
4 Նոյն տեղում, VII, 135, էջ 436

5 Diodorus of Sicily, with an English translation by C. H. Oldfather, Vol. IV, Books IX-XII, Cambridge-Massachusetts-London, 1956, IX, 35, 1, p. 46.
6 Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars II, Lipsiae, 1829, XIV, 19, 25; 26, 80, pp. 825, 834.
7 Plutarch's Lives, with an English translation by B. Perrin, Vol. XI, Cambridge-Massachusetts-London, 1954, Loeb Classical Library, Artaxerxes, II, 3, p. 130.
8 Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, Pars II, XIV, 99, 45, p. 904; Ксенофонт, Анабасис,- Греческая история, пер. С. Лурье, Москва, 2010, IV, 8, 17, с. 367.
9 Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. II, Lipsiae, 1826, XV, 91, 5, p. 500.